

ԸՆԴՈՒՆՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական
հանձնաժողովի խորհրդի 2012 թվականի
հուլիսի 20-ի թիվ 60 որոշմամբ



ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՄՄ ՏԿ 031/2012

**Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների ու դրանց
կցորդների անվտանգության մասին**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Նախաբան	3
Հոդված 1. Կիրառության ոլորտը	3
Հոդված 2. Սահմանումները	5
Հոդված 3. Շուկայում շրջանառության կանոնները	9
Հոդված 4. Անվտանգության պահանջները	10
Հոդված 5. Անվտանգության պահանջներին համապատասխանության ապահովումը	10
Հոդված 6. Համապատասխանության հավաստումը	11
Հոդված 7. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումը	18
Հոդված 8. Պաշտպանության մասով վերապահումը	19
Հավելված 1 «Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների եւ դրանց կցորդների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 031/2012)	20
Հավելված 2 «Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների եւ դրանց կցորդների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 031/2012)	24
Հավելված 3 «Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների եւ դրանց կցորդների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի(ՄՄ ՏԿ 031/2012)	63
Հավելված 4 «Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների եւ դրանց կցորդների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի(ՄՄ ՏԿ 031/2012)	69
Հավելված 5 «Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների եւ դրանց կցորդների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի(ՄՄ ՏԿ 031/2012)	82
Հավելված 6 «Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների եւ դրանց կցորդների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի(ՄՄ ՏԿ 031/2012)	101

ՆԱԽԱԲԱՆ

1. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգը մշակվել է «Բելառուսի Հանրապետությունում, Ղազախստանի Հանրապետությունում եւ Ռուսաստանի Դաշնությունում տեխնիկական կանոնակարգման միասնական սկզբունքների եւ կանոնների մասին» 2010 թվականի նոյեմբերի 18-ի համաձայնագրին համապատասխան:

2. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգը մշակվել է Մաքսային միության միասնական մաքսային տարածքում գյուղատնտեսական եւ անտառատնտեսական անվավոր ու թրթուրավոր տրակտորների եւ դրանց կցորդների նկատմամբ կիրառման ու իրականացման համար պարտադիր միասնական պահանջներ սահմանելու, Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ բաց թողնվող գյուղատնտեսական եւ անտառատնտեսական անվավոր ու թրթուրավոր տրակտորների եւ դրանց կցորդների ազատ տեղաշարժն ապահովելու նպատակով:

3. Եթե տրակտորների եւ կցորդների մասով ընդունվել են Մաքսային միության այլ տեխնիկական կանոնակարգեր, որոնցով սահմանվում են տրակտորներին եւ կցորդներին ներկայացվող պահանջները, ապա տրակտորները եւ կցորդները պետք է համապատասխանեն Մաքսային միության այդ տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

Հոդված 1. ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգը տարածվում է կրկին արտադրվող եւ ներմուծվող գյուղատնտեսական եւ անտառատնտեսական անվավոր ու թրթուրավոր տրակտորների (այսուհետ՝ տրակտորներ) եւ դրանց կցորդների (այսուհետ՝ կցորդներ) վրա, որոնք, անկախ ծագման երկրից, բաց են թողնվում շրջանառության մեջ Մաքսային միության միասնական մաքսային

տարածքում:

Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգը տարածվում է այն տրակտորների եւ կցորդների վրա, որոնք ունեն 6 կմ/ժ-ից ոչ պակաս հաշվարկային առավելագույն արագություն:

Սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները տարածվում են նաեւ տրակտորների եւ կցորդների՝ կրկին արտադրվող ու ներմուծվող բաղադրամասերի վրա (այսուհետ՝ բաղադրամասեր), որոնք ազդում են դրանց անվտանգության վրա եւ անկախ ծագման երկրից բաց են թողնվում շրջանառության մեջ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում տրակտորներից եւ կցորդներից առանձին: Բաղադրամասերի ցանկը, որի վրա տարածվում են Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջները, ներկայացված է Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին հավելվածում:

2. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգը չի կիրառվում՝

այն տրակտորների եւ կցորդների նկատմամբ, որոնք արտադրվում են առանձին անհատական կարգով, ինչպես նաեւ անհատական գործունեության կարգով,

այն տրակտորների եւ կցորդների նկատմամբ, որոնք Մաքսային միության միասնական մաքսային տարածքում բաց են թողնվել շրջանառության մեջ նախքան Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգն ուժի մեջ մտնելը, օգտագործվել, շահագործվել կամ նորոգվել են Մաքսային միության միասնական մաքսային տարածքում:

3. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգով սահմանվում են տրակտորներին, կցորդներին եւ դրանց բաղադրամասերին ներկայացվող պահանջներ՝ մարդու կյանքի եւ առողջության, գույքի, շրջակա միջավայրի պաշտպանության, ինչպես նաեւ դրա նշանակությանն ու անվտանգությանը վերաբերող՝ սպառողներին (օգտագործողներին) մոլորեցնող գործողությունների

կանխարգելման նպատակով:

Հոդված 2. ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐԸ

Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգում կիրառվում են հետևյալ եզրույթները եւ դրանց սահմանումները՝

բալաստային բեռներ՝ տրակտորի վրա տեղադրելու համար նախատեսված բեռներ՝ առջելի եւ (կամ) հետին տնիները լիաբեռնելու համար.

քարշակման սարքվածք՝ տրակտորի առջելի հատվածում գտնվող տրակտորի կառուցվածքի տարր, որն ապահովում է դրա քարշակման համար նախատեսված հարմարանքների (օրինակ՝ մետաղաձողի կամ քարշակման ճոպանի) միացումը.

շահագործման մեջ դնել՝ փաստաթղթերով հաստատված փաստ, որը ցույց է տալիս տրակտորի կամ կցորդի՝ ըստ նշանակության օգտագործվելու համար պատրաստ լինելը.

տրակտորի բարձրություն՝ հեռավորություն, որը չափվում է ուղղաձիգ գծով հենման մակերեսից եւ հենման մակերեսից ամենամեծ հեռավորության վրա գտնվող հենակետի միջեւ՝ առանց ավեհավաքի: Բարձրությունը որոշելիս տրակտորը պետք է սարքավորված լինի նոր դողերով, որոնք ունեն արտադրողի կողմից սահմանված ամենամեծ ստատիկ շառավիղը.

տրակտորի երկարություն՝ հեռավորություն, որը չափվում է հորիզոնական գծով՝ ուղղահայաց հարթությունների միջեւ, որոնք ուղղահայաց են տրակտորի երկայնական առանցքին եւ անցնում են նրա ծայրակետերով՝ բացառությամբ բոլոր հայելիների, գործարկման բռնակի, առջելի կամ հետին եզրաչափային լույսերի.

թույլատրելի քարշակվող զանգված՝ զանգված, որը տրակտորը կարող է քարշակել: Թույլատրելի քարշակվող զանգվածը կարող է ներառել մեկ կամ մի

քանի քարշակվող կցորդների զանգվածը, գյուղատնտեսական կամ անտառատնտեսական մեքենաների զանգվածը.

արտադրող՝ որպես անհատ ձեռնարկատեր հանդես եկող ֆիզիկական անձ կամ իրավաբանական անձ, որն իր անունից իրականացնում է տրակտորի, կցորդի կամ բաղադրամասերի արտադրություն եւ իրացում ու պատասխանատվություն է կրում Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին դրա համապատասխանության համար.

ներմուծող՝ Մաքսային միության անդամ պետության ռեզիդենտ, որը Մաքսային միության անդամ պետության ոչ ռեզիդենտի հետ կնքել է տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի փոխանցման վերաբերյալ արտաքին առևտրային պայմանագիր, իրականացնում է տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի իրացում եւ պատասխանատվություն է կրում Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին դրանց համապատասխանության համար.

տրակտորի (կցորդի) կատեգորիա՝ տրակտորի (կցորդի) բնութագիր, որը կիրառվում է Մաքսային միության տեխնիկական կանոնակարգում պահանջները սահմանելու համար.

բաղադրամաս՝ տրակտորի կամ կցորդի բաղկացուցիչ մաս կազմող սարքվածք, որը մատակարարվում է հավաքման արտադրություն կամ որպես շահագործման մեջ գտնվող տրակտորի կամ կցորդի փոխովի մասեր (պահեստամասեր), որոնց սերտիֆիկացումը կարող է իրականացվել տրակտորից կամ կցորդից առանձին.

տրակտորի, կցորդի կամ բաղադրամասի շրջանառություն շուկայում՝ տրակտորի, կցորդի կամ բաղադրամասի՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում սպառողին (օգտագործողին) անցնելու ընթացակարգեր, որոնց ենթարկվում է տրակտորը, կցորդը կամ բաղադրամասը դրա

արտադրումից հետո.

Կցորդ՝ տրակտորով քարշակվող տրանսպորտային միջոց, որը նախատեսված է գյուղատնտեսական կամ անտառատնտեսական նշանակության բեռները տեղափոխելու համար: Կցորդների թվին են դասվում նաեւ այն կցորդները, որոնց ուղղաձիգ բեռնվածության մի մասը փոխանցվում է քարշակող տրակտորին (կիսակցորդներ).

դողի գլորման շառավիղ՝ անիվի առաջընթաց արագության երկայնական բաղադրիչի հարաբերակցությունը նրա անկյունային արագությանը.

սերտիֆիկացման փորձարկումներ՝ տրակտորի, կցորդի կամ բաղադրամասի տիպային նմուշի (նմուշների) փորձարկումներ, որոնց արդյունքների հիման վրա եզրակացություն է արվում Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին տրակտորի, կցորդի կամ բաղադրամասի համապատասխանության վերաբերյալ.

տրակտորի լրակազմված եւ լիցքավորված զանգված՝ տրակտորի զանգվածն աշխատելիս, ներառյալ շրջվելու դեպքում պաշտպանիչ սարքվածքը, հովացնող հեղուկով, քսանյութերով, վառելիքով (բաք, որը լցված է անվանական տարողության 90%-ից ոչ պակաս), գործիքի եւ օպերատորի հետ միասին.

ամրացման սխեմա՝ սխեմա, որի համաձայն տրանսպորտային փոխադրման ժամանակ իրականացվում է բեռնամբարձիչ սարքավորման միակցումը.

տեխնիկապես թույլատրելի քարշակվող զանգված՝ տրակտորն արտադրողի կողմից սահմանված առավելագույն զանգված, որը տրակտորը կարող է քարշակել.

տեխնիկական նկարագիր՝ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ հավելվածում ներկայացված փաստաթուղթ, որը պարունակում է այն տվյալների ցանկը, որոնք պետք է նշի արտադրողը (արտադրողի կողմից լիազորված անձը), ներմուծողը՝ սերտիֆիկացման

գործընթացներ իրականացնելու համար.

տրակտորի, կցորդի կամ բաղադրամասի տիպ՝ տրակտորներ, կցորդներ կամ բաղադրամասեր, որոնք բնութագրվում են մեկ արտադրողի կողմից պատրաստված տեխնիկական նկարագրերում նշված միեւնույն կառուցվածքային հատկանիշների ամբողջությամբ: Տիպը կարող է ունենալ տարբեր տարբերակներ եւ տարատեսակներ.

տրակտոր՝ անվավոր կամ թրթուրավոր մեխանիկական տրանսպորտային միջոց, որն ունի երկուսից ոչ պակաս սռնի եւ 6 կմ/ժ-ից ոչ պակաս առավելագույն արագություն, առավելապես գործադրվում է քարշային ճիգ եւ հիմնականում նախատեսված է աշխատանքային սարքավորումները քարշակելու, հրելու, փոխադրելու կամ գործի գցելու համար, օգտագործվում է գյուղատնտեսության եւ անտառատնտեսության մեջ.

կցաքարշակային սարքվածք (ԿՔՍ)՝ սարքվածք, որի՝ տրակտորի եւ կցորդի վրա տեղադրված միացնող տարրերն ապահովում են դրանց մեխանիկական միացումը.

արտադրողի կողմից լիազորված անձ՝ Մաքսային միության անդամ պետության կողմից սահմանված կարգով գրանցված իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որն արտադրողի կողմից նրա հետ կնքված պայմանագրի համաձայն նշանակվել է համապատասխանությունը հաստատելիս եւ տրակտորը, կցորդը կամ բաղադրամասը Մաքսային միության միասնական մաքսային տարածքում տեղավորելիս իր անունից գործողություններ կատարելու համար, ինչպես նաեւ Մաքսային միության տեխնիկական պահանջներին տրակտորի, կցորդի կամ բաղադրամասի անհամապատասխանության համար պատասխանատվություն կրելու համար.

տրակտորի լայնություն՝ հեռավորություն, որը չափվում է հորիզոնական գծով տրակտորի երկայնական առանցքին զուգահեռ ուղղահայաց հարթությունների միջեւ եւ անցնում է նրա ծայրակետերով՝ բացառությամբ բոլոր

հայելիների, շրջադարձի ցուցիչների, առջեւի կամ հետին կողային եզրաչափքային լույսերի, արգելակման ազդանշանների, տրակտորի քաշից առաջ եկած դողերի ձեւախախտման, հավաքվող տարրերի: Հավաքվող տարրերի թվին կարող են դասվել, օրինակ՝ ամբարձիչ հենակները:

Հոդված 3. ՇՈՒԿԱՅՈՒՄ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ

1. Տրակտորները, կցորդները եւ բաղադրամասերը բաց են թողնվում շուկայում շրջանառության մեջ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգին, ինչպես նաեւ Մաքսային միության այլ տեխնիկական կանոնակարգերին համապատասխանելու դեպքում, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա պայմանով, որ դրանք անցել են համապատասխանության հաստատումը՝ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածի, ինչպես նաեւ Մաքսային միության այլ տեխնիկական կանոնակարգերի համաձայն, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

2. Այն տրակտորները, կցորդները եւ բաղադրամասերը, որոնց համապատասխանությունը Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին հաստատված չէ, չպետք է մակնշվեն Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով եւ չեն թույլատրվում շուկայում շրջանառության մեջ բաց թողնել:

3. Տրակտորները, կցորդները եւ բաղադրամասերը, որոնք մակնշված չեն Մաքսային միության անդամ պետությունների շուկայում շրջանառության միասնական նշանով, չեն թույլատրվում շուկայում շրջանառության մեջ բաց թողնել:

Հողված 4. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1. Տրակտորների եւ կցորդների կառուցվածքը պետք է ապահովի անվտանգությունը կենսական պարբերաշրջանի բոլոր փուլերում:

2. Տրակտորների եւ կցորդների՝ ըստ կատեգորիաների եւ տիպերի դասակարգումը ներկայացված է Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 3-րդ հավելվածում:

3. T1, T2, T3, T5, C (բացի C4-ից) կատեգորիաների տրակտորներին եւ R կատեգորիայի կցորդներին ներկայացվող անվտանգության պահանջների, ինչպես նաեւ անվտանգության պահանջները եւ դրանց հսկողության մեթոդները սահմանող ստանդարտների ու ՄԱԿ ԵՏՀ կանոնների ցանկը ներկայացված է Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 4-րդ հավելվածի 4.1 աղյուսակում:

4. T4, C4 կատեգորիաների հատուկ նշանակության տրակտորներին ներկայացվող անվտանգության պահանջների, ինչպես նաեւ անվտանգության պահանջները եւ դրանց հսկողության մեթոդները սահմանող ստանդարտների ու ՄԱԿ ԵՏՀ կանոնների ցանկը ներկայացված է Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 4-րդ հավելվածի 4.2 աղյուսակում:

5. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի համաձայն տրակտորներին եւ կցորդներին ներկայացվող անվտանգության պահանջները ներկայացված են Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածում:

Հողված 5. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

1. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգին տրակտորների եւ կցորդների համապատասխանությունն ապահովվում է

անմիջապես դրա պահանջների կատարմամբ եւ ստանդարտների ու ՄԱԿ ԵՏՀ կանոնների պահանջների, ինչպես նաեւ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 4-րդ եւ 5-րդ հավելվածներում ներկայացված պահանջների կատարմամբ:

Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգին բաղադրամասերի համապատասխանությունն ապահովվում է անմիջապես դրա պահանջների կատարմամբ եւ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին հավելվածում ներկայացված ստանդարտների ու ՄԱԿ ԵՏՀ կանոնների պահանջների կատարմամբ:

2. Տրակտորների եւ կցորդների՝ համապատասխանության գնահատման (հավաստման) համար անհրաժեշտ հսկողության մեթոդները սահմանվում են Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 4-րդ հավելվածում ներկայացված ստանդարտներով ու ՄԱԿ ԵՏՀ կանոններով:

Բաղադրամասերի՝ համապատասխանության գնահատման (հավաստման) համար անհրաժեշտ հսկողության մեթոդները սահմանվում են Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին հավելվածում ներկայացված ստանդարտներով ու ՄԱԿ ԵՏՀ կանոններով:

Հոդված 6. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆԱԼՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՍՏՈՒՄԸ

1. Նախքան շուկայում շրջանառության մեջ բաց թողնելը տրակտորները, կցորդները կամ բաղադրամասերը պետք է ենթարկվեն Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին համապատասխանության հավաստման:

Համապատասխանության հավաստումն իրականացվում է ըստ սխեմաների՝ Մաքսային միության հանձնաժողովի կողմից (այսուհետ՝ Հանձնաժողով) հաստատված Մաքսային միության տեխնիկական կանոնակարգերում համապատասխանության գնահատման (հավաստման) տիպային սխեմաների

կիրառության կարգի մասին հիմնադրույթին համապատասխան:

Համապատասխանությունը հավաստելու նպատակներով տրակտորների եւ կցորդների՝ ըստ կատեգորիաների եւ տիպերի դասակարգումը ներկայացված է Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 3-րդ հավելվածում:

Այն բաղադրամասերը, որոնց համապատասխանության հավաստումն իրականացվում է առանձին, ներկայացված են Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին հավելվածում:

Եթե տրակտորների կամ կցորդների արտադրողը հանդես է գալիս որպես այն բաղադրամասերի արտադրող, որոնք մատակարարվում են սեփական հավաքման արտադրություն, ապա Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին հավելվածում նշված բաղադրամասերի համապատասխանության հավաստումն իրականացվում է սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրում ընդգրկված հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) կողմից տրված փորձարկումների արձանագրությունների կամ համապատասխանության սերտիֆիկատների հիման վրա:

Տրակտորների եւ կցորդների սերտիֆիկացման փորձարկումներն իրականացվում են սույն հոդվածի 1-ին կետի 5-րդ պարբերության համապատասխան փորձարկումների դրական արդյունքների կամ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 1-ին հավելվածում ներկայացված բաղադրամասերի վերաբերյալ համապատասխանության սերտիֆիկատների առկայության դեպքում:

2. Տրակտորները, կցորդները կամ բաղադրամասերը սերտիֆիկացման եղանակով ենթակա են համապատասխանության հավաստման (1ս, 3ս, 4ս սխեմաներ):

3. Սերիայով բաց թողնվող տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի սերտիֆիկացումն իրականացվում է 1ս սխեմայի համաձայն:

Սերտիֆիկացման համար նախատեսված տրակտորները, կցորդները կամ բաղադրամասերը ներկայացվում են արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի) կողմից:

Տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի խմբաքանակի սերտիֆիկացումն իրականացվում է 3ս սխեմայի, իսկ եզակի արտադրատեսակի սերտիֆիկացումը՝ 4ս սխեմայի համաձայն: Տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի (եզակի արտադրատեսակ) խմբաքանակը, որն արտադրվում է Մաքսային միության միասնական մաքսային տարածքում, ներկայացնում է արտադրողը (արտադրողի կողմից լիազորված անձը), տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի (եզակի արտադրատեսակ) խմբաքանակը, որը ներմուծվում է Մաքսային միության միասնական մաքսային տարածք, ներկայացնում է ներմուծողը կամ արտադրողը (արտադրողի կողմից լիազորված անձը):

4. Տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի սերտիֆիկացումն իրականացվում է Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրում ընդգրկված սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հավաստման)) հավատարմագրված մարմնի կողմից:

Սերտիֆիկացման նպատակներով փորձարկումներն իրականացվում են Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեեստրում ընդգրկված հավատարմագրված փորձարկման լաբորատորիայի (կենտրոնի) կողմից:

5. Տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի սերտիֆիկացումն իրականացնելիս (1ս, 3ս, 4ս սխեմաներ)՝

5.1. արտադրողը (արտադրողի կողմից լիազորված անձը), ներմուծողը սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հավաստման)) մարմին է ներկայացնում Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի

անվտանգության պահանջներին տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի համապատասխանությունը հաստատող տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի վերաբերյալ փաստաթղթերի փաթեթ, որում ընդգրկված են՝

տրակտորների կամ կցորդների տեխնիկական նկարագիրը: Տեխնիկական նկարագիրը պետք է պարունակի համապատասխանության սերտիֆիկատին կից հավելվածը ձեւակերպելու համար անհրաժեշտ ամբողջ տեղեկությունը: Տեխնիկական նկարագրի ձեւը ներկայացված է Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ հավելվածում: Տեխնիկական նկարագրում պետք է նաեւ ընդգրկվի այն բաղադրամասերի ցանկը, որոնք ունեն համապատասխանության սերտիֆիկատ՝ նշելով տիպի՝ ըստ ՄԱԿ ԵՏՀ կանոնների պաշտոնական հաստատմանն առնչվող այդ սերտիֆիկատների, հաղորդումների համարները,

հիմնական կառուցվածքային փաստաթղթերը, որոնք վերաբերում են ընդհանրապես բաղադրամասին (տեխնիկական պայմաններ, տեխնիկական նկարագիր, ընդհանուր բնույթի գծագրեր, մասնագիր) (բաղադրամասերի սերտիֆիկացման դեպքում),

շահագործման փաստաթղթերը,

Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 4-րդ հավելվածի 4.1 եւ 4.2 աղյուսակներում նշված տրակտորներին ու կցորդներին ներկայացվող անվտանգության պահանջների ցանկից տրակտորի կամ կցորդի բնութագրերի կամ ցուցանիշների ցանկը,

պայմանագիրը (մատակարարման վերաբերյալ պայմանագիրը) կամ ապրանքաուղեկից փաստաթղթերը (տրակտորների, կցորդների կամ (եզակի արտադրատեսակի) բաղադրամասերի խմբաքանակի համար) (3ս, 4ս սխեմաներ):

Որպես ապացուցողական նյութեր կարող են ներկայացվել՝

Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 4–րդ հավելվածի 4.1 եւ 4.2 աղյուսակների առանձին պահանջների առնչությամբ փորձարկման հավատարմագրված լաբորատորիայի (կենտրոնի) կողմից տրված փորձարկումների արձանագրությունները.

ՄԱԿ ԵՏՀ կանոններով տիպի պաշտոնական հաստատմանն առնչվող հաղորդումները.

5.2. արտադրողը ձեռնարկում է բոլոր անհրաժեշտ միջոցները՝ ապահովելու արտադրության գործընթացի կայունությունը եւ արտադրվող տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի համապատասխանությունը Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին.

5.3. սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հավաստման)) մարմինը՝

5.3.1. իրականացնում է նմուշի (նմուշների) վերցնումը.

5.3.2. անցկացնում է տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի նույնականությունը Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 1–ին հոդվածով սահմանված հատկանիշների, Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 4–րդ հոդվածով սահմանված դրույթների եւ սույն հոդվածի 5–րդ կետի 5.1 ենթակետում նշված փաստաթղթերի հետ դրանց բնութագրերի նույնականությունը որոշելու համար.

5.3.3. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին համապատասխանությունը ստուգելու նպատակով տրակտորի, կցորդի կամ բաղադրամասի նմուշը (նմուշները) փորձարկման նպատակով ուղարկում է փորձարկման հավատարմագրված լաբորատորիա (կենտրոն).

5.3.4. կատարում է արտադրության վիճակի վերլուծություն (սխեմա 1ս):

Արտադրողի մոտ տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի

արտադրության որակի կառավարման կամ մշակման ու արտադրության սերտիֆիկացված համակարգի առկայության դեպքում գնահատվում է տվյալ համակարգի՝ Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանող սերտիֆիկացվող տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի կայուն թողարկումն ապահովելու հնարավորությունը.

5.3.5. ընդհանրացնում է տրակտորի, կցորդի կամ բաղադրամասի նմուշի (նմուշների) փորձարկման եւ արտադրության վիճակի վերլուծության արդյունքները.

5.3.6. տրամադրում է Հանձնաժողովի կողմից հաստատված միասնական ձեռնարկ համապատասխանության սերտիֆիկատ՝ վերջինիս կցելով հավելվածը, որում ներկայացվում են տրակտորների կամ կցորդների տեխնիկական նկարագրերը: Սերիայով բաց թողնվող տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը 5 տարի է, տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի (եզակի արտադրատեսակի) խմբաքանակի համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետ չի սահմանվում, ընդ որում, համապատասխանության սերտիֆիկատի մեջ նշվում են արտադրանքի խմբաքանակի տարբերակիչ հատկանիշները՝ նույնականացման համարներ, գործարքի (մատակարարման վերաբերյալ պայմանագրի) մասին տեղեկություններ եւ այլն.

5.4. արտադրողը (արտադրողի կողմից լիազորված անձը), ներմուծողը՝

5.4.1. զետեղում է Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը.

5.4.2. համապատասխանության հավաստումն ավարտելուց հետո կազմում է տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի վերաբերյալ փաստաթղթերի փաթեթ, որում ընդգրկվում են՝

սույն հոդվածի 5-րդ կետի 5.1 ենթակետով նախատեսված փաստաթղթերը,

փորձարկումների արձանագրությունը (արձանագրությունները),

արտադրության վիճակի վերլուծության արդյունքները,

համապատասխանության սերտիֆիկատը,

5.5. սերտիֆիկացման (համապատասխանության գնահատման (հավաստման)) մարմինը փորձարկման հավատարմագրված լաբորատորիայում (կենտրոնում) նմուշի (նմուշների) փորձարկումների կամ արտադրության վիճակի վերլուծություն (սխեմա 1ս) կատարելու միջոցով տեսչական հսկողություն է իրականացնում սերտիֆիկացված տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի նկատմամբ:

6. Տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի վերաբերյալ փաստաթղթերի փաթեթը պետք է պահվի Մաքսային միության անդամ պետությունների տարածքում հետեւյալի առջնությամբ՝

սերիայով բաց թողնվող տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի՝ արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի) մոտ այդ տրակտորները, կցորդները կամ բաղադրամասերը արտադրությունից հանելու (դադարեցնելու) օրվանից առնվազն 10 տարվա ընթացքում.

տրակտորների, կցորդների կամ բաղադրամասերի խմբաքանակի՝ արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի), ներմուծողի մոտ խմբաքանակի վերջին արտադրատեսակն իրացնելու օրվանից առնվազն 10 տարվա ընթացքում:

7. Փաստաթղթերի փաթեթը պետք է՝

շարադրվի ռուսերենով եւ Մաքսային միության անդամ պետության պետական լեզվով (լեզուներով)՝ Մաքսային միության անդամ պետության (պետությունների) օրենսդրության (օրենսդրությունների) մեջ համապատասխան պահանջների առկայության դեպքում:

ներկայացվի պետական վերահսկողության մարմիններին՝ ըստ նրանց

պահանջի:

**Հոդված 7. ՄԱՔԱՍՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԻԱՍՆԱԿԱՆ ՆՇԱՆՈՎ
ՄԱԿՆՇՈՒՄԸ**

1. Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի անվտանգության պահանջներին համապատասխանող եւ Մաքսային միության սույն տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածի համաձայն համապատասխանության հաստատման ընթացակարգն անցած տրակտորները, կցորդները եւ բաղադրամասերը պետք է ունենան Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշում:

2. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշումը կատարվում է նախքան տրակտորը, կցորդը կամ բաղադրամասը շուկայում շրջանառության մեջ դնելը:

3. Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը զետեղվում է յուրաքանչյուր տրակտորի եւ կցորդի կամ արտադրողի ցուցանակի (մակնշման ցուցանակի) վրա ցանկացած եղանակով, որն ապահովում է պարզ ու հստակ պատկերը տրակտորի կամ կցորդի շահագործման ամբողջ ժամկետի ընթացքում, ինչպես նաեւ ներկայացվում դրանց կցվող շահագործման փաստաթղթերում:

4. Բաղադրամասերը մակնշելիս Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանը պետք է զետեղվի անմիջապես յուրաքանչյուր բաղադրամասի (տեխնիկապես հնարավոր լինելու դեպքում) եւ փաթեթվածքի վրա, ինչպես նաեւ ներկայացվի դրան կցվող շահագործման փաստաթղթերում:

Բաղադրամասի՝ պաշտոնական հաստատման նշաններով մակնշումը

հավասարազոր է Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշմանը: Եթե բաղադրամասերի վրա առկա է պաշտոնական հաստատման նշանով մակնշվածք, ապա այդ բաղադրամասերը Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով մակնշելու անհրաժեշտություն չկա :

5. Տրակտորները, կցորդները կամ բաղադրամասերը մակնշվում են Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանով, եթե դրանք համապատասխանում են Մաքսային միության այն բոլոր տեխնիկական կանոնակարգերի պահանջներին, որոնց գործողությունը տարածվում է դրանց վրա:

Հոդված 8. ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍՈՎ ՎԵՐԱՊԱՀՈՒՄԸ

1. Մաքսային միության անդամ պետությունները պարտավոր են ձեռնարկել բոլոր միջոցները՝ տրակտորների, կցորդների եւ բաղադրամասերի՝ Մաքսային միության միասնական մաքսային տարածքում շրջանառության մեջ բացթողումը սահմանափակելու, արգելք սահմանելու համար, ինչպես նաեւ շուկայից հետ կանչելու այն տրակտորները, կցորդները եւ բաղադրամասերը, որոնք չեն համապատասխանում սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

Հավելված 1

«Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների ու դրանց կցորդների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի
(ՄՄ ՏԿ 031/2012)

Տրակտորների կամ կցորդների այն բաղադրամասերի ցանկը, որոնց վրա տարածվում է «Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների ու դրանց կցորդների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջները

(ՄՄ ՏԿ 031/2012)

Աղյուսակ 1.1

Տրակտորի կամ կցորդի բաղադրամաս	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի տարրը կամ տրակտորի կամ կցորդի բաղադրամասին ներկայացվող պահանջները սահմանող ստանդարտի կամ ՄԱԿ ԵՏՀ կանոնների նշումը	Հսկողության մեթոդները սահմանող ստանդարտի կամ ՄԱԿ ԵՏՀ կանոնների նշումը
1	2	3
Կցաքարշակային մեխանիկական սարքվածքներ	USF 2028-2010	USF 2028-2010
Ձայնային ազդանշանի սարքվածքներ ¹⁾	ՄԱԿ ԵՏՀ թիվ 28 (00) կանոններ	ՄԱԿ ԵՏՀ թիվ 28 (00) կանոններ
Ապակիներ ¹⁾	ՄԱԿ ԵՏՀ թիվ 43 (00) կանոններ/ Վերանայում 2	ՄԱԿ ԵՏՀ թիվ 43 (00) կանոններ/ Վերանայում 2
Լոյսն անդրադարձնող	ՄԱԿ ԵՏՀ թիվ 3 (02)	ՄԱԿ ԵՏՀ թիվ 3 (02)

հարմարանքներ ¹⁾	կանոններ/ Վերանայում 3	կանոններ/ Վերանայում 3
Հետին եզրաչափքային լույսեր եւ արգելակման ազդանշաններ ¹⁾	ՄԱԿ ԵՏՀ թիվ 7 (02) կանոններ/ Վերանայում 4	ՄԱԿ ԵՏՀ թիվ 7 (02) կանոններ/ Վերանայում 4
Շրջադարձի ցուցիչներ ¹⁾	ՄԱԿ ԵՏՀ թիվ 6 (01) կանոններ/ Վերանայում 4	ՄԱԿ ԵՏՀ թիվ 6 (01) կանոններ/ Վերանայում 4
Հետին համարանիշի լուսավորման հարմարանք ¹⁾	ՄԱԿ ԵՏՀ թիվ 4 (00) կանոններ/ Վերանայում 2	ՄԱԿ ԵՏՀ թիվ 4 (00) կանոններ/ Վերանայում 2
Հեռահար լույսի լապտերներ ¹⁾	ՄԱԿ ԵՏՀ թիվ 1 կանոններ – Վերանայում 4 ՄԱԿ ԵՏՀ թիվ 8 կանոններ – Վերանայում 4 ՄԱԿ ԵՏՀ թիվ 20 (03) կանոններ/ Վերանայում 3 ՄԱԿ ԵՏՀ թիվ 98 (00) կանոններ/ Վերանայում 1 ՄԱԿ ԵՏՀ թիվ 112 (00) կանոններ/ Վերանայում 1	ՄԱԿ ԵՏՀ թիվ 1 կանոններ – Վերանայում 4 ՄԱԿ ԵՏՀ թիվ 8 կանոններ – Վերանայում 4 ՄԱԿ ԵՏՀ թիվ 20 (03) կանոններ/ Վերանայում 3 ՄԱԿ ԵՏՀ թիվ 98 (00) կանոններ/ Վերանայում 1 ՄԱԿ ԵՏՀ թիվ 112 (00) կանոններ/ Վերանայում 1
Մոտակա լույսի լապտերներ ¹⁾	ՄԱԿ ԵՏՀ թիվ 1 կանոններ – Վերանայում 4 ՄԱԿ ԵՏՀ թիվ 8 կանոններ – Վերանայում 4 ՄԱԿ ԵՏՀ թիվ 20 (03) կանոններ/ Վերանայում 3 ՄԱԿ ԵՏՀ թիվ 98 (00) կանոններ/ Վերանայում 1 ՄԱԿ ԵՏՀ թիվ 112 (00) կանոններ/ Վերանայում 1	ՄԱԿ ԵՏՀ թիվ 1 կանոններ – Վերանայում 4 ՄԱԿ ԵՏՀ թիվ 8 կանոններ – Վերանայում 4 ՄԱԿ ԵՏՀ թիվ 20 (03) կանոններ/ Վերանայում 3 ՄԱԿ ԵՏՀ թիվ 98 (00) կանոններ/ Վերանայում 1 ՄԱԿ ԵՏՀ թիվ 112 (00) կանոններ/ Վերանայում 1
Հակամառախուղային լապտերներ ¹⁾	ՄԱԿ ԵՏՀ թիվ 19 (03) կանոններ/	ՄԱԿ ԵՏՀ թիվ 19 (03) կանոններ/

	Վերանայում 5	Վերանայում 5
Հետին հակամառախուղային լապտերներ ¹⁾	ՄԱԿ ԵՏՀ թիվ 38 (00) կանոններ/ Վերանայում 2	ՄԱԿ ԵՏՀ թիվ 38 (00) կանոններ/ Վերանայում 2
Հետընթացի լապտերիկներ ¹⁾	ՄԱԿ ԵՏՀ թիվ 23 (00) կանոններ/ Վերանայում 3	ՄԱԿ ԵՏՀ թիվ 23 (00) կանոններ/ Վերանայում 3
Կայանման լույսեր ¹⁾	ՄԱԿ ԵՏՀ թիվ 77 (00) կանոններ/ Վերանայում 1	ՄԱԿ ԵՏՀ թիվ 77 (00) կանոններ/ Վերանայում 1
Դողեր	ՄԱԿ ԵՏՀ թիվ 106 (00) կանոններ	ՄԱԿ ԵՏՀ թիվ 106 (00) կանոններ
Շարժիչ	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 14-րդ կետ, ՄԱԿ ԵՏՀ թիվ 24 (03) կանոններ/ Վերանայում 2	ՄԱԿ ԵՏՀ թիվ 96 (02) կանոններ/ Վերանայում 1 ՄԱԿ ԵՏՀ թիվ 49 (04) կանոններ/ Վերանայում 3 ²⁾ ՄԱԿ ԵՏՀ թիվ 24 (03) կանոններ/ Վերանայում 2
Նստատեղ	ԳՕՍՍ 20062-96	ԳՕՍՍ 20062-96
Արագությունը սահմանափակող սարքեր ¹⁾	ՄԱԿ ԵՏՀ թիվ 89 կանոններ	ՄԱԿ ԵՏՀ թիվ 89 կանոններ
Արագաչափեր ¹⁾	ՄԱԿ ԵՏՀ թիվ 39 (00) կանոններ/ Վերանայում 1	ՄԱԿ ԵՏՀ թիվ 39 (00) կանոններ/ Վերանայում 1
Հետին տեսանելիության հայելիներ ¹⁾	ՄԱԿ ԵՏՀ թիվ 46 (02) կանոններ/ Վերանայում 3	ՄԱԿ ԵՏՀ թիվ 46 (02) կանոններ/ Վերանայում 3
Անվտանգության ամրագոտիներ ¹⁾	ՄԱԿ ԵՏՀ թիվ 16 (04) կանոններ/ Վերանայում 5 ԳՕՍՍ 26879-88	ՄԱԿ ԵՏՀ թիվ 16 (04) կանոններ/ Վերանայում 5 ԳՕՍՍ 26879-88
Էցիկ	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 12.1 կետ	ՍՏԲ ԻՍՕ 8082-2004 ԳՕՍՍ Ռ ԻՍՕ 5700-2008 ԳՕՍՍ Ռ ԻՍՕ 3463-2008 ԳՕՍՍ Ռ ԻՍՕ 3449-2009 ԳՕՍՍ Ռ ԻՍՕ 8083-2008 ԳՕՍՍ Ռ ԻՍՕ 8084-2005

¹⁾Մաքսային միության սերտիֆիկացման մարմինների եւ փորձարկման լաբորատորիաների (կենտրոնների) Միասնական ռեցետրում ընդգրկված փորձարկման հավաստագրված լաբորատորիաների (կենտրոնների) կողմից ՄԱԿ ԵՏՀ կանոններով

տիպի պաշտոնական հաստատմանն առնչվող հաղորդումների հիման վրա տրված բաղադրամասերի համապատասխանության սերտիֆիկատի առկայության դեպքում չի իրականացվում նշված բաղադրամասի համապատասխանության հաստատումը Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հոդվածի համաձայն:

²⁾Հարկադրական այրմամբ շարժիչների համար, որոնք աշխատում են բնական գազով կամ հեղուկացված նավթային գազով:

Հավելված 2

«Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների ու դրանց կցորդների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի (ՄՄ ՏԿ 031/2012)

«Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների ու կցորդների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի պահանջներին տրակտորների եւ կցորդների համապատասխանությունը հաստատելու նպատակով արտադրողի (արտադրողի կողմից լիազորված անձի), ներմուծողի կողմից ներկայացվող տեխնիկական նկարագրերի ձեւերը

(ՄՄ ՏԿ 031/2012)

1. Հիմնական բնութագրերի ամբողջական ցանկը

Հիմնական բնութագրերի ամբողջական ցանկը լրացվում է այն դեպքում, երբ դեռեւս առկա չեն մեկ կամ մի քանի համապատասխանության սերտիֆիկատ, առանձին պահանջներին համապատասխանության վերաբերյալ ՄԱԿ ԵՏՀ կանոններով տիպի պաշտոնական հաստատմանն առնչվող հաղորդում:

0. Ընդհանուր տեղեկություններ

0.1. Գործարանային նշանը (արտադրողի գրանցված անվանումը)

.....

0.2. Տիպը (անհրաժեշտության դեպքում նշել տարբերակները եւ տարատեսակները)

0.2.1. Առեստրային նշանը (անհրաժեշտության դեպքում)

.....

0.3. Տրակտորի (կցորդի) տիպի նույնականացման համար նախատեսված բնութագրերը (առկայության դեպքում).....

0.3.1. Արտադրողի ցուցանակը (տեղակայվածությունը եւ տեղադրման եղանակը).....

0.3.2. Շասսիի համարը (զետեղման տեղը)

0.4. Տրակտորի (կցորդի) կատեգորիան

0.5. Արտադրողի անվանումը եւ հասցեն

0.6. Գրանցված նշանների եւ մակագրությունների (լուսանկարների կամ գծագրերի) տեղակայվածությունը եւ տեղադրման եղանակը

0.7. Բաղադրիչների համար՝

Մաքսային միության անդամ պետությունների շուկայում արտադրանքի շրջանառության միասնական նշանի (պաշտոնական հաստատման նշանի) զետեղման տեղը եւ եղանակը.....

0.8. Հավաքման ձեռնարկության հասցեն

1. Տրակտորի (կցորդի) հիմնական կառուցվածքային բնութագրերը

(Պետք է կցել տրակտորի (կցորդի) $\frac{3}{4}$ չափսի առաջակողմի եւ $\frac{3}{4}$ հետնակողմի լուսանկարներ, ինչպես նաեւ գծագիր՝ նշելով տրակտորի (կցորդի) եզրաչափքային չափսերը)

1.1. Սոնիների եւ անիվների թիվը

1.1.1. Երկշերտ դողերով անիվների թիվը եւ տեղակայվածությունը (անհրաժեշտության դեպքում)

1.1.2. Կառավարվող սոնիների թիվը եւ տեղակայվածությունը

1.1.3.. Տանող սոնիներ (թիվը, տեղակայվածությունը եւ հաղորդակը)

1.1.4. Արգելակային սոնիներ (թիվը, տեղակայվածությունը)

1.2. Հաղորդաշարժիչի դիրքը եւ տեղակայվածությունը

1.3. Ղեկանիվի դիրքը՝ աջից/ձախից/մեջտեղում

1.4 Օպերատորի դարձափոխային տեղ՝ այո/ոչ

1.5. Շասսի՝ բլոկային շրջանակ/ առանցքային տիպի/ լոնժերոնային/ծխնիավոր/այլ կառուցվածքի

2. Զանգվածը եւ չափսերը (անհրաժեշտության դեպքում հղում կատարեք ԿՓ-ին)

2.1. Լրակազմված եւ լիցքավորված զանգվածը (ները)

2.1.1. Աշխատեցնելիս լրակազմված եւ լիցքավորված զանգվածը

(օգտագործվում է որպես սկզբնական արժեք)

(այդ թվում՝ շրջվելու դեպքում պաշտպանիչ սարքվածքը, առանց լրացուցիչ լրակազմող մասերի, սակայն հովացնող հեղուկով, քսանյութերով, վառելիքով, գործիքով եւ օպերատորով)՝

առավելագույնը..... կգ

նվազագույնը..... կգ

2.1.1.1. Լրակազմված եւ լիցքավորված զանգվածի բաշխումն ըստ սոնիների
..... կգ

Կենտրոնական առանցք ունեցող կիսակցորդների եւ կցորդների համար՝ ուղղաձիգ ստատիկ բեռնվածությունը կցաքարշակային սարքվածքի կցակետում..... Բ

2.2. Արտադրողի կողմից նշված առավելագույն զանգվածը..... կգ

2.2.1. Տրակտորի (կցորդի) տեխնիկապես թույլատրելի առավելագույն զանգվածը՝ կախված դողերի տեսակից կգ

2.2.2. Առավելագույն զանգվածի բաշխումն ըստ սոնիների կգ

կենտրոնական առանցք ունեցող կիսակցորդների եւ կցորդների համար՝ ուղղաձիգ ստատիկ բեռնվածությունը կցաքարշակային սարքվածքի կցակետում..... Բ

2.2.3. Առավելագույն զանգվածի՝ ըստ սոնիների բաշխման սահմանային արժեքները՝ տոկոսներով

կենտրոնական առանցքով կիսակցորդների կամ կցորդների համար՝ ուղղաձիգ ստատիկ բեռնվածությունը կցաքարշակային սարքվածքի կցակետում..... Բ

Չանգվածը եւ դողերը

Սոնու համարը	Դողերը (չափսերը)	Թույլատրելի բեռնվածությունը, Ն	Սոնու վրա ընկնող տեխնիկապես թույլատրելի առավելագույն զանգվածը, կգ	Կցաքարշակային սարքվածքի կցակետում տեխնիկապես թույլատրելի ստատիկ ուղղաձիգ բեռնվածությունը, Ն
1				
2				
3				

2.2.4. Օգտակար բեռնվածություն

2.3. Բալաստի զանգվածը (ընդհանուր զանգվածը, նյութը, դետալների քանակը)

2.3.1. Բալաստի զանգվածի բաշխումն ըստ սոնիների

2.4. Տեխնիկապես թույլատրելի քարշակվող զանգվածը (զանգվածները)

(կախված միացման տեսակից).....	կգ
2.4.1. Արգելակներ չունեցող կցորդի զանգվածը	կգ
2.4.2. Անկախ արգելակմամբ կցորդի զանգվածը	կգ
2.4.3. Իներցիայի ուժերով արգելակմամբ կցորդի զանգվածը	կգ
2.4.4. Արգելակների հիդրավլիկ կամ օդաճնշական հաղորդակով կցորդի զանգվածը	կգ
2.4.5. Տրակտորի եւ կցորդի կազմի տեխնիկապես թույլատրելի ընդհանուր զանգվածը(ները) (կախված կցորդի արգելակման համակարգի կառուցվածքից)	կգ
2.4.6. Կցակետի դիրքը	
2.4.6.1. Հենման մակերեսային նկատմամբ կցակետի բարձրությունը	
2.4.6.1.1. առավելագույնը	մմ
2.4.6.1.2. նվազագույնը	մմ
2.4.6.2. Հեռավորությունը հետին սոնու միջին ուղղահայաց հարթությունից՝	
2.4.6.2.1. առավելագույնը	մմ
2.4.6.2.2. նվազագույնը	մմ
2.4.6.3. Կցաքարշակային սարքվածքի կցակետում տեխնիկապես թույլատրելի ուղղաձիգ ստատիկ բեռնվածությունը՝	
2.4.6.3.1. տրակտորի՝	Բ
2.4.6.3.2. կենտրոնական առանցքով կիսակցորդի կամ կցորդի՝	Բ
2.5. Հիմք	
2.5.1. Կիսակցորդի՝	
2.5.1.1. կցիչի սոնու եւ առաջին հետին սոնու միջեւ ընկած հեռավորությունը	

..... մմ

2.5.1.2. կցաքարշակային սարքվածքի կցակետի ու կիսակցորդի հետին կետի միջեւ ընկած հեռավորությունը..... մմ

2.6. Յուրքանցուր սոնու վրա անվաղուրի առավելագույն եւ նվազագույն չափսը (չափվում է միաշերտ եւ երկշերտ անիվների միջին հարթությունների միջեւ) (նշվում է արտադրողի կողմից) մմ

2.7. Տրակտորների (կցորդների) չափսերի տիրույթ (եզրաչափքային եւ երթեւեկության մեջ աշխատեցնելու նպատակով սարքավորելիս)

2.7.1. Շասի՝ հավաքված

2.7.1.1. Երկարությունը մմ

2.7.1.1.1. տրակտորի (կցորդի) առավելագույն թույլատրելի երկարությունը մմ

2.7.1.1.2. տրակտորի (կցորդի) նվազագույն թույլատրելի երկարությունը մմ

2.7.1.2. Լայնությունը..... մմ

2.7.1.2.1. տրակտորի (կցորդի) առավելագույն թույլատրելի լայնությունը մմ

2.7.1.2.2. տրակտորի (կցորդի) նվազագույն թույլատրելի լայնությունը մմ

2.7.1.3. Բարձրությունը (աշխատեցնելիս) (սովորական շարժման ընթացքում ըստ բարձրության կարգավորվող ընթացքային մասի դեպքում) մմ

2.7.1.4. Առջեւի ցվիք մմ

2.7.1.4.1. Առջեւի ցվիքի անկյունը՝ աստիճան

2.7.1.5. Հետին ցվիք մմ

2.7.1.5.1. Հետին ցվիքի անկյունը՝ աստիճան

2.7.1.5.2 .Կցակետի առավելագույն եւ նվազագույն թույլատրելի ցվիքը
..... մմ

2.7.1.6. Ճանապարհային գետնահեռությունը՝

2.7.1.6.1. սոնիների միջեւ մմ

2.7.1.6.2. առջեւի սոնիների տակ մմ

2.7.1.6.3. հետին սոնիների տակ մմ

2.7.1.7. Կառուցվածքի եւ (կամ) ներքին լրակազմման եւ (կամ) սարքավորման եւ (կամ) օգտակար բեռնվածության ծանրության կենտրոնի առավելագույն թույլատրելի դիրքը

2.7.2. Տրակտորի եզրաչափային չափսերը՝ ներառյալ կցաքարշակային սարքվածքը

2.7.2.1. Երկարությունը՝ ճանապարհային երթելեկության մեջ օգտագործվելու նպատակով.

առավելագույնը..... մմ

նվազագույնը մմ

2.7.2.2. Լայնությունը՝ ճանապարհային երթելեկության մեջ օգտագործվելու նպատակով.

առավելագույնը..... մմ

նվազագույնը մմ

2.7.2.3. Բարձրությունը՝ ճանապարհային երթելեկության մեջ օգտագործվելու նպատակով.

առավելագույնը մմ

նվազագույնը մմ

2.7.2.4. Առջեւի ցվիք՝

առավելագույնը մմ

նվազագույնը մմ

2.7.2.5. Հետին ցվիք՝

առավելագույնը մմ

նվազագույնը մմ

2.7.2.6. Ճանապարհային գետնահեռությունը՝

առավելագույնը մմ

նվազագույնը մմ

3. Շարժիչը

3.1. Ընդհանուր տեղեկություններ

3.1.1. Հիմնական շարժիչը/շարժիչի տիպը (արտադրողի անվանումը)

.....

3.1.2. Հիմնական շարժիչի տիպը եւ առետրային անվանումն ու (անհրաժեշտության դեպքում) շարժիչների տեսակը

.....

3.1.3. Տիպը նույնականացնելու նպատակով բնութագրերը (շարժիչների վրա առկայության դեպքում), տեղադրման ձեւը.....

3.1.3.1. Շարժիչի նույնականացման համարի տեղակայվածությունը եւ փակցման տեղը

3.1.3.2. Համապատասխանության սերտիֆիկատի համարի զետեղման տեղը եւ

եղանակը	
3.1.4. Արտադրողի անվանումը եւ հասցեն	
3.1.5. Հավաքման ձեռնարկության հասցեն	
3.1.6. Աշխատանքի սկզբունքը՝ հարկադրական այրում/սեղմումից բոցավառում անմիջական ներցայտում/ներցայտում նախախցի մեջ երկտակտ շարժիչ/քառատակտ շարժիչ	
3.1.7. Վառելիք՝ դիզելային/բենզին/հեղուկացված նավթային գազ/վառելիքի այլ տեսակ Շարժիչների ընտանիքի տիպը	
3.2. Ընտանիքի բազային շարժիչի հիմնական բնութագրերը	
3.2.1. Սեղմումից բոցավառվող շարժիչի բնութագրերը	
3.2.1.1. Արտադրող	
3.2.1.2. Նմուշի՝ արտադրողի կողմից սահմանված նշանը	
3.2.1.3. Շարժիչը՝ երկտակտ/քառատակտ	
3.2.1.4. Գլանի տրամագիծը՝	մմ
3.2.1.5. Մխոցի քայլը՝	մմ
3.2.1.6. Գլանների թիվը եւ տեղակայվածությունը	
3.2.1.7. Աշխատանքային ծավալը	սմ ³
3.2.1.8. Պտտման անվանական հաճախությունը	ր ⁻¹
3.2.1.9. Պտտման հաճախությունը առավելագույն պտտող մոմենտի ժամանակ	ր ⁻¹

- 3.2.1.10. Սեղման աստիճանը
- 3.2.1.11. Այրման եղանակի նկարագրությունը
- 3.2.1.12. Այրման խցի եւ մխոցի հատակի գծագրերը
- 3.2.1.13. Ներթողման եւ արտաթողման խողովակների նվազագույն հատվածքը
..... մմ
- 3.2.1.14. Հովացման համակարգը
- 3.2.1.14.1. Հեղուկային հովացում
- 3.2.1.14.1.1. Հովացման հեղուկի տեսակը
- 3.2.1.14.1.2. Հովացման հեղուկի պոմպը (երը)՝ առկա է/առկա չէ
- 3.2.1.14.1.3. Տեխնիկական բնութագրերը կամ մակնիշը կամ տիպը
(անհրաժեշտության դեպքում)
- 3.2.1.14.1.4. Հաղորդակի փոխանցման թիվը (անհրաժեշտության դեպքում)
.....
- 3.2.1.14.2. Օդային հովացում
- 3.2.1.14.2.1. Օդափոխիչ՝ առկա է/առկա չէ
- 3.2.1.14.2.2, Տեխնիկական բնութագրերը կամ մակնիշը կամ տիպը
(անհրաժեշտության դեպքում)
- 3.2.1.14.2.3. Հաղորդակի փոխանցման թիվը (անհրաժեշտության դեպքում)
.....
- 3.2.1.15. Արտադրողի կողմից թույլատրվող ջերմաստիճանը
- 3.2.1.15.1. Հեղուկային հովացում՝ առավելագույն ջերմաստիճանը շարժիչի ելքի
մոտ Կ
- 3.2.1.15. 2. Օդային հովացում՝ ելման կետ

Առավելագույն ջերմաստիճանը ելման կետում	Կ
3.2.1.15.3. Ներմղվող օդի առավելագույն ջերմաստիճանը միջանկյալ հովացուցչի ելքի մոտ (առկայության դեպքում)	Կ
3.2.1.15.4. Բանեցված գազերի առավելագույն ջերմաստիճանը արտաթողման կոլեկտորի ելքի մոտ	Կ
3.2.1.15.5. Շարժիչային յուղի ջերմաստիճանը:	
նվազագույնը	Կ
առավելագույնը.....	Կ
3.2.1.16. Օդամղիչ՝ առկա է/առկա չէ	
3.2.1.16.1. Գործարանային նշանը	
3.2.1.16.2. Տիպը	
3.2.1.16.3. Համակարգի նկարագրությունը (օրինակ՝ ներմղման կափույրի առավելագույն ճնշումը (առկայության դեպքում))	
3.2.1.16.4. Ներմղվող օդի հովացուցիչ՝ առկա է/առկա չէ	
3.2.1.17. Ներթողման համակարգը՝ Ներթողման ժամանակ առավելագույն թույլատրելի նոսրացումը՝ պտույտների անվանական թվի եւ լրիվ բեռնվածության դեպքում.	ԿՊա
3.2.1.18. Բանեցրած գազերի արտաթողման համակարգ՝ բանեցրած գազերի արտաթողման համակարգում առավելագույն թույլատրելի հակաճնշումը պտույտների անվանական թվի եւ լրիվ բեռնվածության դեպքում	ԿՊա
3.2.2. Լրացուցիչ սարքվածքներ, որոնք սահմանափակում են վնասակար նյութերի արտանետումը (եթե առկա են եւ նշված չեն այլ կետում)	
Նկարագրությունը եւ (կամ) գծագիրը (երը)	

3.2.3. Վառելիքային համակարգ

3.2.3.1. Վառելիքի պոմպ

Ճնշում՝ կՊա կամ բնութագրերով դիագրամը
.....

3.2.3.2. Ներցայտման համակարգ

3.2.3.2.1. Պոմպ

3.2.3.2.1.1. Գործարանային նշանը (նշանները)

3.2.3.2.1.2. Տիպը (տիպերը)

3.2.3.2.1.3. Արտադրողականություն՝ մեկ տակտի համար
47. Հետին տեսանելիության հայելիներ	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 6-րդ կետ	ՄԱԿ ԵՏՀ թիվ 46 (02) կանոններ/ Վերանայում 3	X	X	(X)	(X)	I	-
48 Օպերատորի նստատեղը	ԳՕՍՏ 20062-96 ԳՕՍՏ ԻՍՕ 4253-2005	ԳՕՍՏ 20062-96	X	X	X	(X)	(X)	-
49 Ուղեւորի նստատեղը	ԳՕՍՏ ԻՍՕ 4254-3-2005	ԳՕՍՏ 12.2.002-91	X	-	X	(X)	I	-
50 Ձայնի մակարդակը օպերատորի աշխատանքային տեղում	ԳՕՍՏ 12.2.019-2005 ԳՕՍՏ 12.2.102-89	ԳՕՍՏ 12.2.002-91 ԳՕՍՏ 12.2.102-89	X	X	X	(X)	I	-
51 Վիբրացիոն անվտանգություն	ԳՕՍՏ 12.1.012-2004	ԳՕՍՏ 31193-2004	X	X	X	X	I	-
<p>Պայմանական նշումներ՝</p> <p>X - պահանջը կիրառվում է.</p> <p>(X) - պահանջների կիրառելիությունը սահմանում է արտադրողը.</p> <p>[X] – ՄԱԿ-ի ԵՏՀ նշված կանոնները կամ ստանդարտները կիրառվում են կցորդների վրա տարածվող պահանջների մասով.</p> <p>-- պահանջը չի կիրառվում.</p> <p>I – ինչպես T-ի համար՝ կախված կատեգորիայից.</p> <p>* հարկադրական այրմամբ շարժիչների համար, որոնք աշխատում են սեղմված բնական գազով կամ հեղուկացված նավթային գազով:</p>								

Աղյուսակ 4.2 Հատուկ նշանակության տրակտորներին ներկայացվող անվտանգության պահանջների ցանկ

Տրակտորի բնութագիրը կամ ցուցանիշը	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի տարրը կամ ՄԱԿ-ի ԵՏՀ-ի՝ բնութագրի կամ ցուցանիշի նկատմամբ պահանջներ սահմանող կանոնների կամ ստանդարտների նշանակումը	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի տարրը կամ տրակտորի կամ ՄԱԿ-ի ԵՏՀ-ի՝ հսկողության միջոցներ սահմանող կանոնների կամ ստանդարտների նշանակումը	Տրակտորների կատեգորիաները			
			T4.1	T4.2	T4.3	C4.1
1	2	3	4	5	6	7
1 Տեխնիկապես թույլատրելի զանգվածը	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 1-ին կետ	ԳՕՍՏ 12.2.002-91	X	X	X	X
2 Գրանցման համարանիշի տեղադրման հատվածը	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 11-րդ կետ	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 11-րդ կետ	(X)	(X)	X	(X)
3 Վառելիքի բաքը	ԳՕՍՏ 12.2.019-2005 Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 3-րդ կետ	ԳՕՍՏ 12.2.019-2005 Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 3-րդ կետ	X	X	X	X
4 Բալաստային բեռները	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 2-րդ կետ	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 2-րդ կետ	X	X	X	X
5 Ձայնային ազդանշանային սարքվածքներ	ԳՕՍՏ 12.2.019-2005 ԳՕՍՏ 12.2.102-89	ԳՕՍՏ 12.2.019-2005	X	X	X	X
6 Արտաքին աղմուկ	ԳՕՍՏ Ռ 51920-2002	ԳՕՍՏ Ռ 51920-2002	(X)	(X)	X	(X)

	ԳՕՍՍ 12.2.019-2005	ԳՕՍՍ 12.2.002-91				
7 Առավելագույն արագություն	ԳՕՍՍ 30748-2001 Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 4-րդ կետ	ԳՕՍՍ 30748-2001 Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 4-րդ կետ	X	X	X	X
8 Բեռնային հարթակ	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 5-րդ կետ	ԳՕՍՍ 12.2.002-91	(X)	X	(X)	(X)
9 Էլեկտրամագնիսական համատեղելիություն	ՄԱԿ ԵՏՀ թիվ 10 (03) կանոններ/ Վերանայում 3	ՄԱԿ ԵՏՀ թիվ 10 (03) կանոններ / Վերանայում 3	X	X	X	X
10 Ղեկային կառավարում	ԳՕՍՍ Ռ 51961-2002 ՍՏԲ ISO 15077-2010	ՍՏԲ 1611-2006	X	X	X	SD
11 Արգելակային համակարգեր	ԳՕՍՍ 12.2.019-2005	ԳՕՍՍ 12.2.002.3-91	(X)	X	X	(X)
12 Լուսավորման եւ լուսային ազդանշանային սարքվածքներ	ՄԱԿ-ի ԵՏՀ թիվ 86 (00) կանոններ	ՄԱԿ-ի ԵՏՀ թիվ 86 (00) կանոններ	X	X	X	X
13 Քարշակման սարքվածքներ	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 7-րդ կետ	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 7-րդ կետ	(X)	X	X	(X)
14 Հզորության անջատման լիսեռ	ԳՕՍՍ 3480-76	ԳՕՍՍ 26025-83	X	X	X	X
15 Տրակտորի չափսերը եւ կցորդի քարշակվող զանգվածը	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 8-րդ կետ	ԳՕՍՍ 26025-83	(X)	X	X	(X)
16 Մասերի պաշտպանություն	ՍՏԲ 1984-2009	ԳՕՍՍ 12.2.002-91 ԳՕՍՍ 12.2.102-87	(X)	X	X	(X)
17 Կցաքարշակային	ՍՏԲ 2028-2010	ՍՏԲ 2028-2010	X	(X)	X	X

մեխանիկական սարքվածքներ						
18 Արտադրողի ցուցանակ	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 9-րդ կետ	ԳՕՍՍ 26828-86	X	X	X	X
19 Շահագործման ուղեցույցը	ԳՕՍՍ ԻՍՕ/ՏՕ 12100-2-2002 ԳՕՍՍ 27388-87	Տեսողական գնահատում	X	X	X	X
20 Կցորդի արգելակային հաղորդակի միացնող սարքվածք	ՄՏԲ ISO 5676-2010 Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 10-րդ կետ	ԳՕՍՍ 22895-77 ՄՏԲ ISO 5676-2010	X	(X)	X	X
21 Վնասակար նյութերի արտանետումներ	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 14-րդ կետ	ՄԱԿ-ի ԵՏՀ թիվ 96 (02) կանոններ/ Վերանայում 1 ՄԱԿ-ի ԵՏՀ թիվ 49 (04) կանոններ/ Վերանայում 3*	X	X	X	X
22 Բանաձգ գազերի ծխայնությունը	ՄԱԿ-ի ԵՏՀ թիվ 24 (03) կանոններ/ Վերանայում 2	ՄԱԿ-ի ԵՏՀ թիվ 24 (03) կանոններ / Վերանայում 2	X	X	X	X
23 Դողեր	ՄԱԿ-ի ԵՏՀ թիվ 106 (00) կանոններ	ՄԱԿ-ի ԵՏՀ թիվ 106 (00) կանոններ	X	X	X	-
24 Շարժիչի գործարկման եւ դրա աշխատանքի դադարեցման համակարգին ներկայացվող պահանջներ	ԳՕՍՍ 12.2.019-2005 ԳՕՍՍ 19677-87	ԳՕՍՍ 12.2.002-91	X	X	X	X
25 Վնասակար նյութերի	Մաքսային միության սույն	ՄՏԲ EN 15695-1-2011	X	X	X	X

ազդեցությունից օպերատորի պաշտպանությունը	Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 12.2 կետ					
26 Շրջվելու դեպքում պաշտպանիչ սարքվածքը (ROPS) (ստատիկ փորձարկումներ)	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 12.1 կետ	USF hՍՕ 8082-2004 ԳՕՍ Ռ hՍՕ 5700-2008	SD	X	X	SD
27 Շրջվելու դեպքում պաշտպանիչ սարքվածքը (ROPS) (դինամիկ փորձարկումներ)	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 12.1 կետ	USF hՍՕ 8082-2004 ԳՕՍ Ռ hՍՕ 3463-2008	SD	X	X	SD
28 Աշխատանքային տարածքը եւ օպերատորի նստատեղի հասանելիությունը	ԳՕՍ hՍՕ 4252-2005 ԳՕՍ hՍՕ 4253-2005	ԳՕՍ 12.2.002-91	(X)	(X)	(X)	(X)
29 Մուտքի համակարգերը	ԳՕՍ 12.2.019-2005 ԳՕՍ hՍՕ 4254-3-2005 ԳՕՍ 12.2.102-89	ԳՕՍ 12.2.002-91 ԳՕՍ 26025-83 ԳՕՍ 12.2.102-89	X	X	X	X
30 Կառավարման լծակները	USF ISO 15077-2010 ԳՕՍ hՍՕ 4254-3-2005 ԳՕՍ 26336-97	ԳՕՍ 12.2.002-91	X	X	X	X
31 Ապակե պատվածք	ԳՕՍ 12.2.120-2005	USF 1639-2006 ԳՕՍ 5727-88	X	X	X	X
32 Տեսանելիության դաշտ, ապակեմաքրիչներ	ՄԱԿ-ի ԵՏՀ թիվ 71 կանոններ ԳՕՍ 12.2.019-2005	ՄԱԿ-ի ԵՏՀ թիվ 71 կանոններ	(X)	(X)	X	(X)
33 Հետին տեսանելիության հայելիներ	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 6-րդ կետ	ՄԱԿ-ի ԵՏՀ թիվ 46 (02) կանոններ / Վերանայում 3	(X)	X	X	X
34 Օպերատորի նստատեղը	ԳՕՍ 20062-96	ԳՕՍ 20062-96	(X)	X	X	(X)

	ԳՕՍՏ ԻՍՕ 4253-2005					
35 Ուղեւորի նստատեղը	ԳՕՍՏ ԻՍՕ 4254-3-2005	ԳՕՍՏ 12.2.002-91	X	X	X	X
36 Ձայնի մակարդակը օպերատորի աշխատանքային տեղում	ԳՕՍՏ 12.2.019-2005 ԳՕՍՏ 12.2.102-2005	ԳՕՍՏ 12.2.002-91 ԳՕՍՏ 12.2.102-89	(X)	X	X	(X)
37 Վիբրացիոն անվտանգություն	ԳՕՍՏ 12.1.012-2004	ԳՕՍՏ 31193-2004	X	X	X	X
38 Տրակտորների կառուցվածքին ներկայացվող պահանջները	Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 13-րդ կետ	ԳՕՍՏ 12.2.002-91 ԳՕՍՏ 31177-2003	X	X	X	X
<p>Պայմանական նշումներ՝</p> <p>X - պահանջը կիրառվում է.</p> <p>(X) - պահանջների կիրառելիությունը սահմանում է արտադրողը.</p> <p>SD - պահանջը սահմանված չէ.</p> <p>- պահանջը չի կիրառվում.</p> <p>* հարկադրական այրմամբ շարժիչների համար, որոնք աշխատում են սեղմված բնական գազով կամ հեղուկացված նավթային գազով:</p>						

Հավելված 5

«Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների ու դրանց կցորդների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի

(ՄՄ ՏԿ 031/2012)

Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 4-րդ հավելվածին համապատասխան տրակտորներին եւ կցորդներին ներկայացվող անվտանգության պահանջները՝ Մաքսային միության «Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների ու կցորդների անվտանգության մասին» տեխնիկական կանոնակարգին համապատասխան

(ՄՄ ՏԿ 031/2012)

1. Անվավոր տրակտորների շահագործման տեխնիկապես թույլատրելի զանգվածին ներկայացվող պահանջները

1.1. Տրակտորի շահագործման տեխնիկապես թույլատրելի զանգվածը եւ շահագործման զանգվածի թույլատրելի առավելագույն բաշխումն ըստ սոնիների չպետք է գերազանցեն 5.1 աղյուսակում տրված արժեքները՝ կախված տրակտորի կատեգորիայից:

Արտադրողի կողմից ներկայացված շահագործման տեխնիկապես թույլատրելի զանգվածը նաեւ պետք է հաստատվի փորձարկման լաբորատորիայում (կենտրոնում) կատարված փորձարկումների դրական արդյունքներով, մասնավորապես արգելակային համակարգի եւ ղեկային կառավարման արդյունավետության մասով:

Աղյուսակ 5.1

Տրակտորի կատեգորիա	Սոնիների քանակ	Շահագործման տեխնիկապես թույլատրելի զանգվածը, տոննա	Չանգվածի թույլատրելի առավելագույն բաշխումն ըստ սոնիների, տոննա	
			Տանող սոնի	Չտանող սոնի
T1, T2, T4.1	2	18 (բալաստով)	11.5	10
	3	24 (բալաստով)	11.5	10
T3	2 կամ 3	0,6 (առանց բալաստի)	Չի սահմանվում ¹⁾	Չի սահմանվում ¹⁾
T4.3	2, 3 կամ 4	10 (բալաստով)	Չի սահմանվում ¹⁾	Չի սահմանվում ¹⁾
<p>1) T3 եւ T4.3 կատեգորիաների տրակտորների համար զանգվածի թույլատրելի առավելագույն բաշխումն ըստ սոնիների չի սահմանվում, քանի որ T3 եւ T4.3 կատեգորիաների տրակտորները ունեն շահագործման թույլատրելի առավելագույն զանգվածի (բալաստով եւ առանց բալաստի) սահմանափակումներ:</p> <p>Ծանոթագրություն՝ Այս պահանջները տարածվում են տրակտորների միայն այն կատեգորիաների վրա, որոնք ներկայացվում են սույն աղյուսակում:</p>				

1.2. Տրակտորի յուրաքանչյուր բեռնման դեպքում կառավարվող սոնու անիվներով ճանապարհին հաղորդվող զանգվածը պետք է լինի տրակտորի լիցքավորված եւ լրակազմված զանգվածի առնվազն 20%-ը:

2. Անվավոր տրակտորների բալաստային բեռներին ներկայացվող պահանջները

2.1. Եթե Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխանելու համար տրակտորները պետք է համալրված լինեն բալաստային բեռներով, ապա բալաստային բեռները պետք է առաքվեն տրակտորի արտադրողի կողմից, հարմար լինեն տրակտորի մեջ տեղադրելու համար եւ ունենան արտադրողի մակնշվածքը՝ նշելով զանգվածը՝ կիլոգրամներով՝ $\pm 5\%$ սխալանքով: Առջեւի բալաստային բեռների կառուցվածքը, որոնք նախատեսված են հաճախակի հանելու/տեղադրելու համար, պետք է ապահովի բռնակների համար առնվազն 25 մմ անվտանգ տարածությունը: Բալաստային բեռների տեղադրման եղանակը պետք է կանխի դրանց ոչ

կանխամտածված անջատումը (օրինակ՝ տրակտորի շրջվելու դեպքում):

3. Վառելիքի բաքերին ներկայացվող պահանջներ

3.1. Վառելիքի բաքերը պետք է լինեն կոռոզիադիմացկուն: Դրանք պետք է պահպանեն հերմետիկությունը աշխատանքային ճնշումը 2 անգամ գերազանցող (սակայն ոչ պակաս, քան 30 կՊա) ճնշման դեպքում: Ավելցուկային ճնշումը կամ աշխատանքային ճնշումը գերազանցող ճնշումը պետք է ինքնաբերաբար հավասարակշռության բերվեն համապատասխան սարքվածքներով (օդային, պահպանիչ կափույրներ եւ նմ):

Օդային կափույրների կառուցվածքը պետք է ապահովի հրդեհային անվտանգությունը: Վառելիքը չպետք է հոսի բաքի կափարիչի կամ ավելցուկային ճնշումը հավասարակշռության բերելու համար նախատեսված սարքերի միջով նույնիսկ այն դեպքում, երբ բաքը գտնվում է ամբողջությամբ շրջված վիճակում (փոքր քանակությամբ վառելիքի հոսքը թույլատրվում է):

3.2. Վառելիքի բաքերը պետք է տեղադրել այնպես, որ ապահովվի տրակտորի առջեւի կամ հետեւի մասին հասցված հարվածի հետեւանքներից պաշտպանությունը: Բաքի կողքին չպետք է լինեն դուրս ցցուն մասեր, սուր եզրեր եւ նմ:

3.3. Վառելիքամուղները եւ լցնելու համար նախատեսված անցքերի բերանները պետք է գտնվեն խցիկից դուրս:

4. Անվավոր տրակտորների հաշվարկային արագության հաշվարկմանը եւ ստուգմանը ներկայացվող պահանջները

4.1. Որպեսզի փորձարկման լաբորատորիան (կենտրոնը) կարողանա որոշել տրակտորի հաշվարկային առավելագույն արագությունը, արտադրողը պետք է նշի փոխհաղորդակի (տրանսմիսիայի) փոխանցման թիվը, անիվի մեկ ամբողջական պտույտի ընթացքում շարժահաղորդ անիվների փաստացի տեղափոխումը, շարժիչի ծնկավոր լիսեռի պտույտի անվանական հաճախությունը:

4.2. Տրակտորը փորձարկելիս շարժման արագությունը պետք է չափվի ուղղագիծ տարածքի վրա, որը տրակտորը պետք է հատի մեկ անցումով ուղիղ եւ հակառակ ուղղություններով: Տարածքի մակերեսը պետք է պատրաստված լինի կոշտ նյութից, լինի տափակ, հարթ, ունենա առնվազն 100մ երկարություն. թույլ է տրվում ներառել 1,5 տոկոսից ոչ ավելի թեքություն:

4.3. Փորձարկելիս տրակտորը պետք է գտնվի աշխատանքային ռեժիմում, լինի չբեռնավորված, առանց բալաստային բեռների եւ հատուկ սարքավորումների, իսկ ճնշումը անհիվներում պետք է համապատասխանի արտադրողի կողմից նշված՝ տրանսպորտային աշխատանքների կատարման համար անհրաժեշտ ճնշմանը:

4.4. Փորձարկելիս տրակտորը պետք է համալրված լինի օդաճնշական նոր դողերով՝ գլորման՝ տրակտորի արտադրողի կողմից հաստատված առավելագույն շառավղով:

4.5. Փորձարկման ժամանակ օգտագործվող փոխանցման տուփի փոխանցումը պետք է ապահովի տրակտորի առավելագույն արագությունը, իսկ շարժիչի պտույտի հաճախության կարգավորիչից կառավարման լծակների դիրքը պետք է համապատասխանի վառելիքի լրիվ մատակարարմանը:

4.6. Փորձարկումների ժամանակ թույլատրելի է համարվում չափումների արդյունքում ստացված՝ տվյալ տրակտորի համար թույլատրելի մեծությունները 3 կմ/ժ-ով, որպեսզի հաշվի առնվի չափումների ժամանակ առկա անճշտությունները, ինչպես նաեւ մասնակի բեռնման դեպքում շարժիչի ծնկավոր լիսեռի պտույտի հաճախության մեծացման նպատակով:

5. Անվավոր տրակտորների բեռնային հարթակին ներկայացվող պահանջները

5.1. Բեռնային հարթակի ծանրության կենտրոնը պետք է տեղակայված լինի տնիների միջեւ:

5.2. Բեռնային հարթակի չափերը պետք է համապատասխանեն հետեւյալ

պահանջներին.

Երկարությունը չպետք է գերազանցի տրակտորի առջեւի կամ հետեւի անվաղորների չափսը (կախված նրանից, թե դրանցից որն է ավելի մեծ) ավելի քան 1,4 անգամ.

լայնությունը չպետք է գերազանցի առանց աշխատանքային սարքավորումների տրակտորի եզրաչափքային առավելագույն լայնությունը:

5.3. Հարթակը պետք է համաչափ տեղադրված լինի տրակտորի երկայնակի հարթության նկատմամբ:

5.4. Բեռնային հարթակի դիրքի բարձրությունը հենման մակերեսային նկատմամբ պետք է կազմի 1500մմ-ից ոչ ավելի:

5.5. Նորմալ բեռնվածության դեպքում հարթակի կառուցվածքը եւ ամրացման ձեւը չպետք է փակեն օպերատորի տեսանելիության դաշտը, ինչպես նաեւ չխոչընդոտեն լուսավորող եւ լուսազդանշանային սարքավածքների աշխատանքը:

5.6. Բեռնային հարթակը պետք է լինի հանովի եւ պետք է միանա տրակտորին այնպես, որ բացառի պատահական անջատումը:

6. Անվավոր տրակտորների հետին տեսանելիության հայելիների տեղադրմանը ներկայացվող պահանջները

6.1. Տրակտորները պետք է սարքավորված լինեն I եւ II դասի հետին տեսանելիության հայելիներով՝ ըստ ՄԱԿ ԵՏՀ թիվ 46 (02) կանոնների/Վերանայում 3:

6.2. Հետին տեսանելիության հայելիները պետք է տեղադրվեն այնպես, որ շարժման սովորական պայմաններում դրանց դիրքը պահպանվի:

6.3. Բոլոր տրակտորները պետք է սարքավորված լինեն տրակտորի ձախ կողմում տեղադրված առնվազն մեկ հետին տեսանելիության արտաքին հայելիով:

6.4. Հետին տեսանելիության հայելին պետք է տեղադրված լինի այնպես, որ աշխատանքային սովորական դիրքում տեղադրված նստատեղում գտնվող օպերատորը պարզ տեսնի սույն հավելվածի 6-րդ կետի 6.11 ենթակետում սահմանված ճանապարհահատվածը:

6.5. Հետին տեսանելիության հայելին պետք է տեսանելի լինի ապակեմաքրիչով մաքրվող դիմապակու միջով կամ կողային ապակիների միջով, եթե տրակտորը սարքավորված է դրանցով :

6.6. Հետին տեսանելիության հայելին չպետք է դուրս ցցվի տրակտորի եզրաչափերից կամ կցորդով տրակտորի կազմից ավելի, քան անհրաժեշտ է սույն հավելվածի 6-րդ կետի 6.11 ենթակետում սահմանված տեսանելիության դաշտի ստացման համար:

6.7. Եթե հետին տեսանելիության հայելու ներքին եզրը տրակտորի բեռնավորված լինելու դեպքում գտնվում է հենման մակերեսային նկատմամբ 2մ-ից պակաս բարձրության վրա, ապա հետին տեսանելիության այդ հայելին չպետք է դուրս ցցվի տրակտորի՝ առանց հետին տեսանելիության ապակիների չափված արտաքին չափերից կամ կցորդով տրակտորի կազմից ավելի, քան 0,2մ-ը:

6.8. Հետին տեսանելիության յուրաքանչյուր ներքին հայելի պետք է կարգավորվի օպերատորի կողմից աշխատանքային տեղից:

6.9. Օպերատորը պետք է հնարավորություն ունենա հետին տեսանելիության արտաքին հայելու դիրքը կարգավորելու՝ աշխատանքային տեղում գտնվելով: Ընդ որում, հայելին կարող է տեղադրվել պահանջվող դիրքում դրսի կողմից: Թույլատրվում է հետին տեսանելիության արտաքին հայելու կարգավորումը դրսի կողմից, ընդ որում, օպերատորը պետք է ունենա առնվազն երեք հենման կետ:

6.10. Սույն հավելվածի 6-րդ կետի 6.9 ենթակետում ներկայացված պահանջը չի կիրառվում հետին տեսանելիության արտաքին այն հայելիների նկատմամբ, որոնք տեղափոխումից հետո ինքնաբերաբար հետ են վերադառնում իրենց

առաջնային դիրք՝ առանց գործիքի կիրառման:

6.11. Հետին տեսանելիության ձախ հայելու տեսանելիության դաշտը պետք է լինի այնպիսին, որ օպերատորը կարողանա տեսնել հետետում հարթ եւ հորիզոնական ճանապարհի հատվածը, որը գտնվում է երկայնակի հորիզոնական միջին հարթությանը զուգահեռ հարթությունից ձախ, որն անցնում է տրակտորի եզրաչափային լայնության կամ կցորդով տրակտորի կազմի ամենաձախ կետով:

7. Անվավոր տրակտորների քարշակման սարքվածքներին ներկայացվող պահանջները

7.1. Յուրաքանչյուր տրակտոր պետք է ունենա հատուկ սարքավորում, որն ապահովում է քարշակման համար հարմարանքների (օրինակ՝ ձողերի կամ քարշակման ճոպանի) միացումը:

7.2. Միացման հանգույցով համալրված սարքվածքը պետք է տեղադրվի տրակտորի առջետում:

7.3. Սարքվածքը պետք է իրենից երկժանի ներկայացնի: Երկժանու ներքին հարթությունների միջեւ հեռավորությունը միացման հանգույցի կենտրոնով պետք է լինի $60-1.5+0.5$ մմ, իսկ երկժանու բռնիչի՝ հանգույցի կենտրոնից չափված խորությունը պետք է լինի $(62 \pm 0,5)$ մմ:

Միացման հանգույցը պետք է ունենա $30+1,5$ մմ տրամագիծ եւ համալրված լինի օգտագործման ժամանակ դրան խոռոչից ընկնել թույլ չտվող սարքվածքով: Փակող սարքվածքը պետք է հանման ենթակա չլինի:

8. Անվավոր տրակտորներին, կցորդներին եւ կցորդի թույլատրելի քարշակվող զանգվածին ներկայացվող պահանջները

8.1. Չափսերը

8.1.1. Տրակտորի եզրաչափային չափսերը պետք է լինեն ոչ ավելի, քան՝

երկարությունը՝ 12մ.

լայնությունը՝ 2,55մ (առանց դողերի՝ հենման մակերեսային շփման կետին մոտ առաջացող ելուստները հաշվի առնելու)։ թույլատրվում է եզրաչափային լայնության մեծացումը մինչև 3,1մ ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման համար (T4.2 կատեգորիայի տրակտորների համար տրակտորի եզրաչափային լայնությունը պետք է լինի ոչ ավելի, քան 4,4մ)։

բարձրությունը՝ 4մ:

8.1.2. Կցորդի եզրաչափային չափսերը պետք է լինեն, ոչ ավելի, քան՝

լայնությունը՝ 2,55մ (դողերի՝ հենման մակերեսային հետ շփման կետին մոտ առաջացող ելուստները հաշվի չառնելով)։

բարձրությունը՝ 4մ:

8.2. Կցորդի թույլատրելի քարշակվող զանգվածը

8.2.1. Կցորդի առավելագույն քարշակվող զանգվածը չպետք է գերազանցի՝

տրակտորի արտադրողի կողմից առաջարկվող տեխնիկապես թույլատրելի քարշակվող զանգվածը.

կցաքարշակային սարքվածքի համար սահմանված քարշակվող զանգվածը:

9. Անվավոր տրակտորներին և կցորդների վրա արտադրողների ցուցանակների դիրքին, ամրացմանը և բովանդակությանը ներկայացվող պահանջները

9.1. Գյուղատնտեսական և անտառատնտեսական բոլոր տրակտորների և կցորդների վրա պետք է տեղադրվեն ցուցանակներ՝ մակնվածքով, որի բովանդակությունը ներկայացվում է հաջորդիվ: Ցուցանակները տեղադրվում են արտադրողի կողմից:

9.2. Արտադրողի ցուցանակը

9.2.1. Արտադրողի ցուցանակը պետք է տեղադրվի տրակտորի կամ կցորդի լավ տեսանելի եւ հեշտ հասանելի հատվածում եւ չպետք է փոխարինվի ծառայության ամբողջ ժամանակահատվածում: Ցուցանակի տեքստը պետք է լինի հեշտ կարդացվող եւ պահպանվի տրակտորի եւ կցորդի ծառայության ամբողջ ժամանակահատվածում:

Տրակտորի վրա արտադրողի ցուցանակը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

արտադրողի անվանումը.

տրակտորի տիպը եւ տարբերակը (տարատեսակը) (առկայության դեպքում).

համապատասխանության հավաստագրի համարը (լրացուցիչ կերպով ավելացվում է համապատասխանության հավաստագիրը ստանալուց հետո).

տրակտորի նույնականացման համարը.

բեռնավորված վիճակում տրակտորի թույլատրելի նվազագույն եւ առավելագույն ընդհանուր զանգվածը՝ կախված այն դողերի թույլատրելի տիպերից, որոնք կարող են տեղադրվել.

տրակտորի յուրաքանչյուր սոնուն բաժին ընկնող թույլատրելի առավելագույն բեռնվածությունը այն դողերի հնարավոր տիպերին համապատասխան, որոնք կարող են տեղադրվել (տեղեկությունները պետք է ներկայացվեն հերթականությամբ՝ առջեւի սոնուց դեպի վերջինը).

կցորդի տեխնիկապես թույլատրելի քարշակվող զանգվածը (զանգվածները):

Կցորդի վրա արտադրողի ցուցանակը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները.

արտադրողի անվանումը.

կցորդի տիպը եւ տարբերակը (առկայության դեպքում).

համապատասխանության հավաստագրի համարը (լրացուցիչ կերպով

ավելացվում է համապատասխանության հավաստագիրը ստանալուց հետո)։

բեռնավորված վիճակում կցորդի թույլատրելի նվազագույն եւ առավելագույն ընդհանուր զանգվածը՝ կախված այն դողերի թույլատրելի տիպերից, որոնք կարող են տեղադրվել։

կցորդի յուրաքանչյուր սոնուն բաժին ընկնող թույլատրելի առավելագույն բեռնվածությունը (տեղեկությունները պետք է ներկայացվեն հերթականությամբ՝ առջեւի սոնուց դեպի վերջինը)։

տրակտորի կցաքարշակային սարքվածքի բեռնվածությունը (կիսակցորդների համար)։

9.2.2. Արտադրողը կարող է հիմնական մակնշվածքից ներքեւ կամ կողքին ներկայացնել լրացուցիչ տեղեկություններ՝ միայն սույն հավելվածի 9-րդ կետի 9.2.1 ենթակետում ներկայացած տեղեկությունները պարունակող հստակ մակնշված ուղղանկյուններից դուրս։ Արտադրողի ցուցանակի օրինակը ներկայացված է Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 6-րդ հավելվածում։

9.3. Տրակտորի նույնականացման համարը

9.3.1. Տրակտորի նույնականացման համարն իրենից ներկայացնում է արտադրողի կողմից յուրաքանչյուր տրակտորի համար սահմանված նշանների հաստատված համակցություն։ Դրա նպատակն է երաշխավորել, որ յուրաքանչյուր տրակտոր կարողանա արտադրողի կողմից հստակ կերպով նույնականացվել 30 տարվա ընթացքում։

9.3.2. Նույնականացման համարը պետք է զետեղվի արտադրողի ցուցանակի վրա, ինչպես նաեւ տրակտորի առջեւի աջ հատվածում՝ շրջանակի կամ կառուցվածքային որեւէ այլ մասի վրա։

9.3.3. Նույնականացման համարը հնարավորության դեպքում պետք է տեղավորվի մեկ տողում։

9.3.4. Նույնականացման համարը պետք է տեղադրվի լավ տեսանելի եւ հասանելի հատվածում՝ հորատման կամ դրոշմելու միջոցով, ինչն ապահովում է դրա ջնջվելու կամ վնասվելու անհնարինությունը:

9.4. Նշանները

9.4.1. Սույն հավելվածի 9-րդ կետի 9.2 ենթակետով նախատեսված մակնշվածքը կատարվում է ռուսերենով եւ Մաքսային միության անդամ պետության (պետությունների) պետական լեզվով (լեզուներով)՝ Մաքսային միության անդամ պետության (պետությունների) օրենսդրությունում համապատասխան պահանջների առկայության դեպքում: Սույն հավելվածի 9-րդ կետի 9.2 եւ 9.3 ենթակետերով նախատեսված մակնշվածքի համար պետք է օգտագործվեն արաբական թվանշաններ:

9.4.2. Տրակտորի նույնականացման համարի նշանակման ժամանակ պետք է օգտագործվեն լատիներեն մեծատառեր. «I», «O», «Q» տառերի, գծիկների, աստղանշանների եւ հատուկ այլ նշանների օգտագործումը չի թույլատրվում:

Տառերի եւ թվերի նվազագույն բարձրությունը հետեւյալն է՝

7մմ այն նշանների համար, որոնք դրվում են անմիջապես շրջանակի կամ տրակտորի այլ նման հատվածի վրա.

4մմ այն նշանների համար, որոնք զետեղվում են արտադրողի ցուցանակի վրա:

10. Կցորդի արգելակային համակարգի կառավարման լծակին եւ անվավոր տրակտորների կցորդի արգելակային հաղորդակի կցորդիչին ներկայացվող պահանջները

10.1. Տրակտորը պետք է սարքավորված լինի կցորդի արգելակման կառավարման լծակով, այն կարող է լինել ձեռքի կամ ոտքի կառավարման եւ պետք է կառավարվի օպերատորի աշխատանքային տեղից, ինչպես նաեւ անկախ

լինի կառավարման մյուս լծակներից:

Եթե տրակտորը սարքավորված է կցորդի արգելակների օդաճնշական կամ հիդրավլիկ հաղորդակով, ապա տրակտորի եւ կցորդի կազմի արգելակումը կառավարվում է կառավարման միայն մեկ միասնական լծակով:

10.2. Արգելակային կիրառվող համակարգերը կարող են ունենալ բնութագրեր, որոնք համապատասխանում են ՄԱԿ ԵՏՀ-ի՝ գյուղատնտեսական եւ անտառատնտեսական անվավոր տրակտորների եւ կցորդների արգելակման սարքվածքների վերաբերյալ թիվ 13 (10) կանոններում/Վերանայում 6 ներկայացված բնութագրերին:

Արգելակային համակարգերը պետք է նախագծվեն այնպես, որ ապահովեն կցորդի արգելակի խափանման, ինչպես նաեւ կապի խափանման դեպքում տրակտորի եւ կցորդի անվտանգ կանգառը:

10.3. Եթե նախատեսված է տրակտորի օդաճնշական, հիդրավլիկ կամ կոմբինացված հաղորդակ, ապա այն պետք է համապատասխանի հետեւյալ պահանջներին:

10.3.1. Հիդրավլիկ հաղորդակ

Հիդրավլիկ հաղորդակը պետք է լինի միալար տեսակի:

Հիդրավլիկ միակցող սարքվածքը պետք է համապատասխանի USP ISO 5676-2010-ին, ընդգրկվող կիսակցորդիչը պետք է տեղադրվի տրակտորի վրա:

Կցորդի արգելակի կառավարման լծակը պետք է ապահովի միակցող գլխիկում ճնշման բացակայությունը ոչ աշխատանքային պայմաններում, աշխատանքային ճնշումը պետք է լինի առնվազն 10 ՄՊա եւ ոչ ավելի, քան 15 ՄՊա:

Չի թույլատրվում անջատել շարժիչն էներգիայի աղբյուրից:

10.3.2. Օդաճնշական հաղորդակ

Կցորդի արգելակի օդաճնշական հաղորդակը պետք է լինի երկլարանի, ընդ որում, արգելակման գործընթացը պետք է սկսվի կառավարման մայրուղում ճնշման բարձրացման դեպքում:

Թույլատրվում է տրակտորների վրա տեղադրել կցորդի արգելակի օդաճնշական միալար հաղորդակ: Տվյալ դեպքում արգելակման գործընթացը պետք է սկսվի արգելակման մայրուղում ճնշման իջեցման դեպքում:

Միացնող գլխիկը պետք է համապատասխանի USF ISO 1728-2010-ին:

Կցորդի արգելակի կառավարման լծակը պետք է ապահովի միացման գլխիկին առավելագույն ճնշման մատակարարումը՝ առնվազն 0,65 ՄՊա եւ ոչ ավելի, քան 0,8 ՄՊա:

10.3.3. Կցորդի արգելակի օդաճնշական, հիդրավլիկ եւ կոմբինացված հաղորդակների կառուցվածքը պետք է ապահովի կցորդի արգելակումը տրակտորից կցորդի վթարային անջատման դեպքում:

11. Տրակտորների գրանցման հետին թվի տեղակայման հատվածին ներկայացվող պահանջները

11.1. Կոնֆիգուրացիան եւ գրանցման հետին համարանիշի տեղադրման հատվածի չափսերը

Գրանցման հետին համարանիշի տեղակայման հատվածը պետք է իրենից ներկայացնի հարթ, ուղղահայաց ուղղանկյունաձեւ մակերեսույթ՝ հետեւյալ նվազագույն չափսերով.

երկարություն՝ 255մմ.

լայնություն՝ 165մմ:

11.2. Գրանցման հետին համարանիշի տեկայման հատվածի դիրքը եւ գրանցման հետին համարանիշի ամրացումը

Գրանցման հետին համարանիշի տեկայման հատվածը պետք է լինի

այնպիսին, որ գրանցման համարանիշը ճիշտ ամրացնելու դեպքում ապահովվի հետեւյալ պահանջների կատարումը:

11.2.1. Գրանցման համարանիշի դիրքը տրակտորի լայնության նկատմամբ

Գրանցման համարանիշի կենտրոնը չպետք է գտնվի տրակտորի համաչափ մակերեւոյթից աջ:

Գրանցման համարանիշի ծախ եզրը չի կարող գտնվել այն ուղղահայաց մակերեւոյթից ծախ, որը զուգահեռ է տրակտորի համաչափ մակերեւոյթին եւ անցնում է տրակտորի՝ լայնությամբ առավել աչքի ընկնող հատվածով:

11.2.2. Գրանցման համարանիշի դիրքը տրակտորի համաչափ երկայնակի մակերեւոյթի նկատմամբ

Գրանցման համարանիշը պետք է տեղակայված լինի ուղղահայաց կամ գործնականորեն տրակտորի համաչափ երկայնակի մակերեւոյթի նկատմամբ ուղղահայաց:

11.2.3. Գրանցման համարանիշի դիրքը ուղղահայաց մակերեւոյթի նկատմամբ

Գրանցման համարանիշը պետք է տեղակայված լինի ուղղաձիգ 5° թույլատրելի թերաչափսով: Չնայած դրան՝ գրանցման համարանիշը կարող է տեղակայված լինել ուղղաձիգի նկատմամբ անկյան տակ, եթե դա պահանջում է տրակտորի կոնֆիգուրացիան՝

30° -ից ոչ ավելի անկյան տակ, երբ գրանցման համարանիշի վերին հատվածը առաջ է թեքված, այն պայմանով, որ գրանցման համարանիշի վերին եզրը տեղակայված է հենման մակերեւոյթի նկատմամբ 1,20 մ-ից ոչ բարձր.

15° -ից ոչ ավելի անկյան տակ, երբ գրանցման համարանիշի վերին հատվածը հետ է թեքված, այն պայմանով, որ գրանցման համարանիշի վերին եզրը տեղակայված է հենման մակերեւոյթի նկատմամբ 1,20 մ-ից բարձր:

11.2.4. Գրանցման համարանիշի բարձրությունը հենման մակերեւոյթի

Նկատմամբ

Գրանցման համարանիշի ստորին եզրը պետք է տեղակայված լինի հենման մակերեսային նկատմամբ առնվազն 0,3 մ բարձրության, իսկ վերին եզրը՝ 4 մ-ից ոչ ավելի բարձրության վրա:

11.2.5. Հենման մակերեսային նկատմամբ գրանցման համարանիշի բարձրության որոշումը

Սույն հավելվածի 11-րդ կետի 11.2.3 եւ 11.2.4 ենթակետերում նշված բարձրությունը պետք է չափել տրակտորի վրա տեղադրված հիմնական սարքավորումներով (ներառյալ շրջվելու դեպքում պաշտպանիչ սարքվածքները եւ լրացուցիչ հարմարանքների բացառմամբ), նստատեղի բեռով, որը համապատասխանում է օպերատորի զանգվածին (75 ± 10 կգ), վառելիքաքսուքային նյութերով ամբողջությամբ լիցքավորված, հովացման հեղուկներով տարաներով, լրակազմ գործիքներով:

12. Տրակտորի խցիկի պաշտպանական հատկությունները

Գյուղատնտեսական տրակտորները պետք է սարքավորված լինեն պաշտպանական խցիկներով կամ ունենան ընկնող առարկաներից պաշտպանող սարքվածքներ եւ պաշտպանիչ սարքվածքներ շրջվելու դեպքում:

Անտառատնտեսական տրակտորները պետք է համալրված լինեն խցիկներով եւ սարքավորված լինեն շրջվելու դեպքում պաշտպանության միջոցներով, ընկնող առարկաներից պաշտպանող սարքվածքներով եւ օպերատորի պաշտպանիչ սարքվածքներով:

12.1. Օպերատորի պաշտպանիչ սարքվածքներ

Գյուղատնտեսական տրակտորների՝ ընկնող առարկաներից պաշտպանող սարքվածքները (FOPS) պետք է համապատասխանեն ներթափանցումից պաշտպանության I մակարդակին՝ ըստ ԳՕՍՏ Ռ ԻՍՕ 3449-2009-ի:

Գյուղատնտեսական տրակտորների շրջվելու դեպքում պաշտպանիչ

սարքվածքները՝ ըստ ԳՕՍՏ Ռ ԻՍՕ 3463-2008-ի կամ ըստ ԳՕՍՏ Ռ ԻՍՕ 5700-2008-ի

Անտառատնտեսական տրակտորների՝ օպերատորի պաշտպանիչ սարքվածքները պետք է համապատասխանեն՝

ՄՏԲ ԻՍՕ 8082-2004-ին՝ շրջվելու դեպքում պաշտպանիչ սարքվածքների (ROPS) մասով.

ԳՕՍՏ Ռ ԻՍՕ 8083-2008-ին՝ ընկնող առարկաներից պաշտպանող սարքվածքների (FOPS) մասով.

ԳՕՍՏ Ռ ԻՍՕ 8084-2005-ին՝ օպերատորի պաշտպանիչ սարքվածքների (OPS) մասով:

12.2. Օպերատորի պաշտպանությունը վնասակար նյութերի ազդեցությունից

Օգտագործման համար նախատեսված բոլոր տրակտորները, որոնց օգտագործման ժամանակ հնարավոր է օպերատորի՝ վտանգավոր նյութերի հետ շփման վտանգ, պետք է սարքավորված լինեն ՄՏԲ EN 15695-1-2011-ի 2-րդ, 3-րդ եւ 4-րդ մակարդակների պահանջներին համապատասխանող խցիկներով: Մակարդակի ընտրության չափանիշը պետք է ներկայացվի շահագործման ուղեցույցի մեջ:

Թունաքիմիկատների փոշիացման համար նախատեսված սարքավորումներով տրակտորները պետք է սարքավորված լինեն ՄՏԲ EN 15695-1-2011-ով 4-րդ մակարդակի պահանջներին համապատասխանող խցիկով:

13. Տրակտորների եւ կցորդների կառուցվածքին ներկայացվող լրացուցիչ պահանջները

13.1. Տրակտորների եւ կցորդների կայունությանը ներկայացվող պահանջները

Տրակտորների եւ կցորդների լայնական ստատիկ կայունության անկյունը, կախված դրանց կատեգորիաներից եւ կիրառման պայմաններից, սահմանվում է

ԳՕՍՍ 12.2.019-2005-ին համապատասխան: Տեխնիկական նկարագրերի ձեւը ներկայացված է Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 2-րդ հավելվածում:

Լեռնային պայմաններում աշխատելու համար նախատեսված տրակտորները պետք է սարքավորված լինեն թույլատրելի առավելագույն թեքվածքով ազդանշանիչներով:

13.2. Տրակտորների հրդեհային պաշտպանությանը ներկայացվող պահանջները

Տրակտորի հրդեհային պաշտպանությունը պետք է համապատասխանի ՍՏԲ ԵՆ 13478-2006-ին եւ ԳՕՍՍ 30879-2003-ին (սրահի մշակման համար կիրառվող նյութերի մասով):

Տրակտորում պետք է նախատեսված լինեն տեղեր՝ կրակմարիչներ ամրացնելու համար:

13.3. Տրակտորների եւ կցորդների հիդրոհաղորդակին ներկայացվող պահանջները

Տրակտորների եւ կցորդների հիդրոհաղորդակները պետք է համապատասխանեն ԳՕՍՍ 31177-2003-ի պահանջներին:

13.4. Շահագործման ժամանակ անվտանգության ապահովմանը ներկայացվող պահանջները

Տրակտորի եւ կցորդի կառուցվածքի տարրերը, որոնք կարող են աշխատանքի, սպասարկման կամ փոխադրման ժամանակ վտանգ ներկայացնել, պետք է ունենան ազդանշանային գունավորում: Ազդանշանային գույները եւ անվտանգության նշանները պետք է համապատասխանեն ԳՕՍՍ Ռ 12.4.026-2001-ին:

Ծպեղային շղթաներն ամրացնելու եւ միացնելու սխեմաները պետք է ներկայացվեն տրակտորի եւ կցորդի վրա եւ նշվեն շահագործման ուղեցույցի մեջ:

Ամբարձչի տեղադրման տեղերը դրոշմվում են տրակտորի եւ կցորդի վրա՝ ըստ ԳՕՍՍ 26336-97-ի:

13.5. Տրակտորների խցիկին ներկայացվող լրացուցիչ պահանջները

Տրակտորի խցիկում պետք է նախատեսված լինեն տեղեր՝ բժշկական դեղարկղիկի, օպերատորի արտահագուստի եւ տեխնիկական փաստաթղթերը դնելու համար:

Տրակտորի խցիկը պետք է սարքավորված լինի առջևի ապակիների ողողիչներով:

Տրակտորի խցիկը պետք է սարքավորված լինի օպերատորի դեմքը արեւի ուղիղ ճառագայթներից պաշտպանող սարքով:

Տրակտորի խցիկի բացվող պատուհանները պետք է բացվեն ներսից եւ ունենան բաց եւ փակ վիճակում դրանք ամրացնելու սարք:

Տրակտորի խցիկի դռները պետք է ունենան բանալիով փակվող փականքներ եւ սեւեռակ՝ դրանք ամբողջովին բաց վիճակում պահելու համար:

13.6. Լրացուցիչ պայմաններ ինքնաթափ կցորդների նկատմամբ

Ինքնաթափ կցորդները եւ կիսակցորդները պետք է նախագծված լինեն այնպես, որ հարթակը չանցնի բարձրացված վիճակում դրա թույլատրելի ամենաբարձր դիրքը:

Ինքնաթափ կցորդները եւ կիսակցորդները պետք է սարքավորված լինեն բարձրացված վիճակում ոչ բեռնված հարթակն ամրացնելու հարմարանքով (հենակով) (կողմերից մեկի վրա եւ դեպի հետ կամ միայն դեպի հետ, եթե չկան կողային բեռնաթափումներ):

14. Տրակտորների շարժիչների բանաձ գազերի մեջ պարունակվող վնասակար նյութերի արտանետումներին ներկայացվող պահանջները

14.1. Մինչեւ 2017 թվականի փետրվարի 15-ը տրակտորների շարժիչների

բանաձ գազերի մեջ պարունակվող վնասակար նյութերի արտանետումները չպետք է գերազանցեն այն քանակությունները, որոնք ներկայացված են՝

ՄԱԿ ԵՏՀ թիվ 49 (04) կանոններում/Վերանայում 3 (կետ 5.2.1, տող B1)՝ հարկադրական այրմամբ շարժիչների համար, որոնք աշխատում են սեղմված բնական գազով կամ հեղուկացված նավթային գազով.

ՄԱԿ ԵՏՀ թիվ 96 (02) կանոններում/Վերանայում 1՝ սեղմումից բոցավառվող շարժիչների համար:

14.2. Մինչև 2017 թվականի փետրվարի 15-ը տրակտորների շարժիչների բանաձ գազերի մեջ պարունակվող վնասակար նյութերի արտանետումները չպետք է գերազանցեն այն քանակությունները, որոնք ներկայացված են՝

ՄԱԿ ԵՏՀ թիվ 49 (04) կանոններում/Վերանայում 3 (կետ 5.2.1, տող B2)՝ հարկադրական այրմամբ շարժիչների համար, որոնք աշխատում են սեղմված բնական գազով կամ հեղուկացված նավթային գազով.

5.2 աղյուսակում՝ սեղմումից բոցավառվող շարժիչների համար:

Աղյուսակ 5.2

Տրակտորի շարժիչի հզորությունը, կՎտ	Ածխածնի օքսիդի (CO) զանգվածը, գ/կՎտ-ժ	Ածխաջրածինների (HC) զանգվածը, գ/կՎտ-ժ	Ազոտի օքսիդների զանգվածը (NOx), գ/կՎտ/ժ	Կարծր մասնիկների (PT) զանգվածը, գ/կՎտ-ժ
19-ից մինչև 37	5,5	(HC + NOx) 7,5		0,6
« 37 « 56	5,0	(HC + NOx) 4,7		0,025
« 56 « 75	5,0	0,19	3,3	0,025
«75 «130	5,0	0,19	3,3	0,025
« 130 « 560 ներառյալ	3,5	0,19	2,0	0,025

14.3. Մինչև 2017 թվականի փետրվարի 15-ը թույլատրվում է սույն հավելվածի 14.2 կետում նշված պահանջների կիրառումը:

Հավելված 6

«Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների ու դրանց կցորդների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգի

(ՄՄ ՏԿ 031/2012)

Տրակտորի արտադրողի ցուցանակը եւ «Գյուղատնտեսական եւ անտառատնտեսական տրակտորների ու կցորդների անվտանգության մասին» Մաքսային միության տեխնիկական կանոնակարգին համապատասխան տեխնիկապես թույլատրելի քարշակվող զանգվածների դասակարգումը

(ՄՄ ՏԿ 031/2012)

1. Տրակտորն արտադրողի ցուցանակի օրինակը

ՄԻՆԵՍԿԻ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆ	
Տեսակը՝ 846E	
XXXX համապատասխանության հավաստագրի համարը	
Նույնականացման համարը՝ GBS18041947	
Թույլատրելի ընդհանուր զանգվածը՝ *	4820 - 6300 կգ
Առջեւի սոնու թույլատրելի բեռնվածությունը՝*	2390 - 3200 կգ
Հետին սոնու թույլատրելի բեռնվածությունը՝*	3130 - 4260 կգ
* Կախված դրդերից:	
Կցորդի թույլատրելի քարշակվող զանգվածը՝ - առանց արգելակների՝	3000 կգ
- անկախ արգելակմամբ՝	6000 կգ
- իներցիայի ուժով արգելակմամբ՝	3000 կգ
- արգելակման հիդրավլիկ կամ օդաճնշական հաղորդակով՝	12000 կգ

2. Տեխնիկապես թույլատրելի քարշակվող զանգվածի դասակարգումը

Հաշվի են առնվում կցորդների տեխնիկապես թույլատրելի քարշակվող հետտեյալ զանգվածները.

2.1. Առանց արգելակների կցորդի զանգվածը

2.2. Անկախ արգելակմամբ կցորդի զանգվածը, այսինքն՝ մեքենատրակտորային ագրեգատն արգելակվում է հետտեյալ բնութագրերն ունեցող սարքվածքներով՝

կցորդի արգելակի կառավարման լծակը հանդիսանում է տրակտորի արգելակի կառավարման լծակից եւ բոլոր դեպքերում տեղադրվում է տրակտորի վրա այնպես, որ կարողանա օպերատորի կողմից իր աշխատանքային տեղից հեշտ գործադրվի.

օպերատորի մկանային ուժը հանդիսանում է քարշակվող կցորդի արգելակման համար օգտագործվող էներգիա:

2.3. Իներցիայի ուժով արգելակմամբ կցորդի զանգվածը, այսինքն՝ կցորդն արգելակվում է կցորդի՝ տրակտորին մոտենալու արդյունքում առաջացող ուժի օգտագործմամբ:

2.4. Արգելակների հիդրավլիկ, օդաճնշական կամ կոմբինացիոն հաղորդակներով սարքավորված կցորդի զանգվածը, այսինքն՝ մեքենատրակտորային ագրեգատի արգելակումը կարող է լինել անընդհատ, մասամբ ընդհատվող կամ մեխանիզացված ինքնուրույն հաղորդակով:

Մեքենատրակտորային ագրեգատի անընդհատ արգելակումն իրականանում է հետտեյալ բնութագրերն ունեցող սարքվածքի միջոցով՝

կառավարման մեկ ընդհանուր լծակ, որի վրա իր աշխատանքային տեղում գտնվող օպերատորն ազդում է մեկ սահուն շարժումով.

մեքենատրակտորային ագրեգատի արգելակման համար օգտագործվող էներգիան ստացվում է միեւնույն աղբյուրից (որը կարող է լինել օպերատորի

մկանային ուժը).

արգելակային համակարգն ապահովում է եւ՛ տրակտորի, եւ՛ կցորդի միաժամանակ կամ փուլային արգելակումը՝ անկախ դրանց հարաբերական դիրքից.

մեքենատրակտորային ագրեգատի արգելակման մասամբ ընդհատվող արգելակումն իրականացվում է հետտեյալ բնութագրերն ունեցող սարքվածքի միջոցով՝

կառավարման մեկ ընդհանուր լծակ, որի վրա իր աշխատանքային տեղում գտնվող օպերատորն ազդում է մեկ սահուն շարժումով.

մեքենատրակտորային ագրեգատի արգելակման համար օգտագործվող էներգիան ստացվում է մի քանի տարբեր աղբյուրներից (որոնցից մեկը կարող է լինել օպերատորի մկանային ուժը).

արգելակային համակարգն ապահովում է եւ՛ տրակտորի, եւ՛ կցորդի միաժամանակ կամ փուլային արգելակումը՝ անկախ դրանց հարաբերական դիրքից:

Մեքենատրակտորային ագրեգատի մեխանիզացված ինքնուրույն հաղորդակով արգելակումն իրականացվում է հետտեյալ բնութագրերն ունեցող սարքվածքի միջոցով՝

կցորդի արգելակի կառավարման լծակը հանդիսանում է տրակտորի արգելակի կառավարման լծակից անկախ եւ բոլոր դեպքերում տեղադրվում է տրակտորի վրա այնպես, որ այն հեշտ գործադրվի օպերատորի կողմից իր աշխատանքային տեղից.

օպերատորի մկանային ուժը չի հանդիսանում քարշակվող կցորդի արգելակման համար օգտագործվող էներգիա:

3. Արտադրողի կողմից սահմանված տեխնիկապես թույլատրելի քարշակվող զանգվածի եւ թույլատրված քարշակվող զանգվածի միջեւ

տարբերությունը ներկայացված է Մաքսային միության սույն Տեխնիկական կանոնակարգի 5-րդ հավելվածի 8.2 կետում: